№ 205 ՇԱԲԱԹ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 205

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 4 ռուբլի։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ՆԻՆԱ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՑԸ իր որդիներով յայտնում է ազգականներին ու ծանօթներին, որ իր հանգուցեալ ամուսին

Աբրահամ Սիմէօնեան ՅՈՎՍԷՓԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեայ հոգեհանգիստը կատարվելու է ամսիս 20-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, Ջգրաշէնի եկեղեցում։

959. 1—1

Սեպտեմբերի 17-ին իր կեանքին ողբերգական վերջ տուած

ԴԱՒԻԹ ԳԱԼՍՏԵԱՆԻ

հարազատները, բարեկամներն ու ընկերները յայտնում են այդ մասին։
Հոգեհանգիստը տեղի կունենայ ժամը 6-ին երեկոյեան։
Թաղումը կիրակի օրը, ամսիս 20-ին, որի մասին կը յայտարարվի առանձին։

Շաբաթ, սեպտեմբերի 19-ին
տեղի կունենայ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,
որի պարապմունքի առարկաները կը լինեն՝
ա) Ընթացիկ գործեր,
բ) Զեկուցում ընկերութեան ամառվայ գործունէութեան մասին։
գ) Էջմիածնի հողերի ոռոգման խնդիրը. զեկուցումներ՝ պ. պ. Կ. Մելիք-Շահնազարեանի, Գ. Կիրակոսեանի և ուրիշների։
Նիստը տեղի կունենայ Կովկ. Գիւղ. Ընկ. դահլիճում (Барятинск. ул.) երեկոյեան ժամը 7½-ին։
Կարող են ներկայ լինել և կողմնակի անձեր։
(ու. շ.) (առ.) 956 2—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ОБОИ
ԵՂԲ. ՏԱՌՆՕՊՈԼԻ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Գտնվում է Կայսրութեան բոլոր մեծ քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում—Գօլօվինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շէնքը.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԵՆ
(հ. շ. ե.) առ. 927. 0—4

ԲԺԻՇԿ
ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ մորթու հիւանդութիւնների
→ վերադարձաւ ←
և առաջվայ նման ընդունում է հիւանդների
Ընդունելութիւնը ամեն օր: 1—4 ժամը ցերեկվայ, 7—9 ժամը երեկոյեան
Միխայէլեան պր. 38 (Ռէալական դպր. դիմաց), հեռ. 663.
(առ.) 841. 10—9

ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԱՔՐԵԼ

Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց, որ Բագւում տեղի է ունեցել խոլերայով հիւանդանալու մի դէպք։

Մենք սպասում ենք լրացուցիչ տեղեկութիւն այդ հաղորդակցութեան առիթով, ստուգելու եղած դէպքը և տեղեկանալու, թէ եզակի՞ է արդեօք դէպքը թէ՞ նա առաջին արտայայտութիւնն է խոլերայի տարածման Բագուի շրջանում։

Մենք հրաւիրում ենք ընթերցողների յատուկ ուշադրութիւնը խոլերայի հիւանդութեան այդպիսի լուրերի վրա ոչ այն դիտումով, որ առանձին երկիւղ ազդած լինենք մարդկանց, այլ դրդելու նրանց դէպի խելացի առողջապահական կարգադրութիւններ՝ խոլերայի վտանգաւոր հետևանքներից ազատ մնալու համար։

Խոլերան վտանգաւոր և մահաբեր հիւանդութիւն է, բայց ներկայումս նա այլևս չէ հանդիսանում այնպիսի մի հիւանդութիւն, որից անկարելի լինէր խուսափել։

Վերջին տասնեակ տարիներում կատարված բազմաթիւ դիտողութիւնները և գիտնական փորձերը ցոյց տուին, որ կարելի է մաքառել խոլերայի դէմ և թոյլ չը տալ, որ նա տարածվի ընդարձակ ծաւալով։

Այժմ պարզված է, որ նախազգուշական միջոցներով, առողջապահական ձեռնարկութիւններով հնարաւոր է արգելել խոլերայի մուտքը դէպի մի երկիր, իսկ մուտք գործելուց յետոյ սահմանափակել նրա տարածումը և մարդկանց դարձնել պատուաստման միջոցով անընկճելի՝ խոլերայի թոյնի առաջ։

Սակայն այդ բոլորը չը պէտք է մարդկանց օրօրի անդորրութեան երազներով և դարձնի նրանց անտարբեր դէպի խոլերայի դէմ մաքառելու գործը։ Ամեն մի զանցառութիւն և անտարբերութիւն կը լինի կործանաբեր և մահաբեր։

Երբ դուք գործադրում էք խոլերայի դէմ այն բոլոր միջոցները, որոնք պարզված են գիտութեան կողմից, դուք յիրաւի ուժեղ էք և անմերձենալի. բայց երբ դուք անտես էք առնում առողջապահութեան ցուցումները՝ դուք այն ժամանակ ձեզ դնում էք նոյն անօգնական վիճակի մէջ, որը յատուկ էր սրանից 20—30 տարի առաջ, երբ խոլերան, երևալով մի որևէ տեղում, առատ հունձ էր վերցնում՝ սարսափ բերելով մարդկանց՝ ընդարձակ տարածութիւնների վրա։

Խոլերայի տարածման դէմ մաքառելու միջոցներն արդէն յայտնի են, և մեր հասարակութիւնը իր հիմնարկութիւններով չը պէտք է թոյլ տայ, որ առանձին և եզակի դէպքերը դառնան վարակիչ իրանց շրջապատի համար։

Այն դէպքն, որ տեղի է ունեցել Բագւում, առաջ է բերում պահանջ կարելիին չափ արագ և ճիշդ հետազօտութեան, թէ ինչ պայմաններում է զարգացել հիւանդութիւնը։

Աններելի կը լինի, եթէ մեր զանցառութեան և անտարբերութեան շնորհիւ մենք թոյլ տանք խոլերային մուտք գործելու մեր քաղաքները և գիւղերը։

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ

Էջմիածին, 14 սեպտ.

Շաբաթ օր պատարագիչն էր միաբանութեան աւագագոյն անդամ Մեսրոպ արքեպիսկոպոսը, որ և երդւեցրեց Կաթողիկոսին օրէնքով սահմանված ձևով։

Ժամը 2-ին սեղանատանը տեղի ունեցաւ ճաշկերոյթ, ուր առաջին անգամ պաշտօնապէս Մեսրոպ արքեպիսկոպոսը առաջարկեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը։ Միաբանութիւնից և հանդիսականներից մի քանիսը արտասանեցին ճառեր։ Հ. Առաքելեան, առաջարկելով Էջմիածնի միաբանութեան կենացը, ցոյց տալով այն դերը, որ ունի կատարելու միաբանութիւնը, իբրև անմիջական գործակից և աջակից Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բարեմաղթեց, որ անմիաբանութիւնը և երկպառակութիւնը, որոնք տիրում են միաբանութեան մէջ, վերանան, և նա կանգնէ իր կոչման բարձրութեան վրա։ Ի պատասխանի Մեսրոպ արքեպիսկոպոսը շնորհակալութիւն յայտնելով՝ ասաց, որ սխալ է այն կարծիքը, թէ Էջմիածնի միաբանութիւնը պառակտված է։ Խօսեցին Աւ. Արասխանեան և Սիօն վարդապետ։

Ժամը 4-ին տեղի ունեցաւ Վեհափառի հանդիսաւոր երթը վեհարանից տաճար, հսկման և երեկոյեան ժամերգութեան համար։

Վերջապէս հասաւ կիրակին, օծումն ընդունելու օրը, որին հանդիսատես լինելու համար հաւաքվել էր այնքան մեծ բազմութիւն և եկել էին բազմաթիւ՝ աւելի քան 200 պատգամաւորներ և ներկայացուցիչներ։ Բոլոր ջանքերը թէ կարգադիրների և թէ ոստիկանութեան կողմից՝ կարգ պահպանելու՝ անհնարին եղան. հազարաւոր ժողովուրդը ցանկանում էր մտնել տաճարը, իսկ տաճարը կարող էր ընդունել միայն 2000 մարդ, մինչ օծումը տեսնել ցանկացողների թիւը 20,000 էր։ Հարկ եղաւ զինուորական օգնութեան դիմել, կարգը պահպանելու համար։

Այդ օրը Էջմիածին հասաւ և «Թայմս» անգլիական լրագրի թղթակից Ռալֆ Բիւտլէրը, որ ամբողջ արարողութեան ժամանակ սկզբից մինչև վերջը դիտում էր և յայտնեց ինձ յետոյ, թէ տեսարանը խիստ տպաւորիչ էր։

Ես չեմ նկարագրի օծման ամբողջ հանդէսը. դա արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին։ Կաշխատեմ լրացնել պակասութիւնները։

Պատարագին երգում էին հ. Կոմիտասը իր խմբով, որ պատրաստել էր շատ շտապ, մի քանի օրում, ճեմարանի աշակերտներից, և երգիչ Ամիրջանը։

Կաթողիկոսը սեղանից քարոզ խօսեց։ Յիշեցնելով որ ինքն երէկ երդումն տուեց հաւատարմութեան և անձնուիրութեան առ Կայսրն, առ գահն ռուսաց, նա ասաց. «Տալով զկայսերն կայսեր, այժմ ես տուի զԱստուծոյն Աստուծոյ»։ Ինչպէս իմ պարտքս է հաւատարիմ լինել Կայսրին և պետական օրինաց ու օրինապահութեան մէջ մնալու խրատել իմ հօտը, նոյնպէս ես պարտաւոր եմ հաւատարիմ մնալ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրէնքներուն և յորդորել հօտս սիրել այդ եկեղեցին, որ միութեան շաղկապ է ի սփիւռս աշխարհի տարածուած հայերու մէջ»։ Ապա նա խօսեց Խաչի նշանակութեան մասին, որ առաջ անարգանքի գործիք էր, բայց յետոյ դարձաւ անձնազոհութեան, անձնուիրութեան նշանաբան. խօսեց պատմական այն վեհ դէպքերի մասին, որոնք մտցրին քրիստոնէութիւնը հայոց մէջ և բարձրացրին Հայաստանում ևս Խաչի նշանակութիւնը։

Ամբողջ արարողութեան ժամանակ Կաթողիկոսը սաստիկ յուզված և զգացված էր։ Ծնկաչոք, երբ 12 եպիսկոպոսները ձեռնադրում էին նրան ու օծում, նա աղօթում էր. աղօթում էր, անշուշտ, տարաբաղդ, բազմաչարչար հայ ժողովրդի համար, աղօթում էր, անշուշտ, որ իր հայրապետութիւնը այդ ժողովրդի և եկեղեցու համար ապարդիւն չանցնէ։

Ժամը 2-ին սեղանատանը կայացաւ պաշտօնական ճաշ և օծեալ Կաթողիկոսը իջաւ սեղանատուն։ Շատ շատերն էին ցանկանում ներկայ լինել այդ ճաշին, բայց սեղանատունը կարող էր միայն 300 հիւրեր ընդունել և մեծ ջանքեր գործադրվեցին կարգ և կանոն պահպանելու համար։ Եղան, ի հարկէ, շատ դժգոհներ։

Առաջին կենացը առաջարկեց Կաթողիկոսը Կայսր Նիկոլա II-ի արևշատութեան համար։ Նա մի համառօտ, բայց ամփոփ ճառով բացատրեց այն բարիքները, որ ռուսական գահը արել է հայոց եկեղեցուն և ժողովրդին։ Ռուսական հիմնը հնչեց, և սեղանատան կամարները թնդացին „Боже Царя Храни“ երգով, որ երգեց Ամիրջան։

Նահանգապետ կոմս Տիզենհաուզէն առաջարկեց Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը, շնորհաւորելով նրա օծումը։ Թնդաց «Տէր կեցոյ զհայս» օրհներգը։

Մնացած կենացների մասին ես արդէն հեռագրել եմ։ Այստեղ առաջ կը բերեմ մի քանի ճառախօսների ճառերի համառօտ բովանդակութիւնը։ Ծրագրված էին 9 կենացներ և ճառեր։ Ալեք. Խատիսեան բաժակ առաջարկեց ռուս մեծ ժողովրդի կենացը, ժողովրդի, որից Ռուսաստանի հայերը ստացել են իրանց կուլտուրան, ստանում են գիտութիւն, սնվում են նրա լաւագոյն զաւակների և գրողների մտաւոր արտադրութիւններով։ Այս կենացը ընդունվեց մեծ ոգևորութեամբ։

Հ. Առաքելեան իր ճառի մէջ շեշտեց այն հանգամանքը, թէ ինչու հայոց եկեղեցին ազգային ժողովրդական է, ինչու նա ձգում է դէպի իրան ոչ միայն կրօնասէրներին և հաւատացողներին, այլ և ազատ մտածողներին. որովհետև այդ եկեղեցին հանդիսացել է մի այնպիսի հաստատութիւն, որի մէջ ամենից շատ և ամենից զօրեղ՝ ցոլացել է հայ ազգի ստեղծագործական հանճարը։ Նա բարեմաղթեց, որ Մատթէոս Բ. նոր օծեալ Կաթողիկոսը լինի մինը այն հայրապետներից, որոնք փայլուն հետքեր են թողել իրանց ետևից և որոնց անունը գիտէ ամեն մի գրագէտ հայ։

Կարապետ վարդապետ մի երկար ճառով բացատրեց Էջմիածնի նշանակութիւնը։

Ճաշը վերջացաւ հազիւ ժամը 6-ին երեկոյեան, և ամբողջ գիշերը ժողովրդական մեծ տօնախմբութիւն էր։

Այդ օր Կաթողիկոսն իր օծումն ամենահպատակօրէն ծանուցեց Թագաւոր Կայսրին հեռագրով։ Ծանուցեց նաև Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվին, որ դեռ Կաթողիկոսի հեռագիրը չը ստացած՝ շտապել էր ինքը շնորհաւորել։

Հ. Ա.

ՕԾՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Էջմիածին, 17 սեպտեմբերի

Երկուշաբթի, սեպտեմբերի 14-ին, առաւօտեան ժամը 12-ին, Վեհափառ Կաթողիկոսի հրամանով վեհարան հրաւիրվեցին սինօդի անդամները, թեմակալ առաջնորդները և Էջմիածին եկած աշխարհական պատգամաւորների և հիւրերի մի խումբ՝ 30—35 հոգի։ Սկզբում լուր տարածվեց, որ լինելու է պատգամաւորական ժողով, բայց ապա յայտնվեց, որ Կաթողիկոսը կամենում է կազմել մի մասնաւոր խորհրդակցութիւն ազգային եկեղեցական գործերին փոքր ի շատէ մօտ կանգնած և ծանօթ անձերից, սինօդի անդամների և թեմերի առաջնորդների հետ միասին։

Բացի դրանից՝ այդ օրը և ժամին որոշված էր ներկայացնել Կաթողիկոսին համազգային ընտրողական ժողովի որոշումները։ Ինչպէս յայտնի է, անցեալ տարի, երբ Էջմիածնում կայացաւ համազգային ընտրողական ժողով, սա, Կաթողիկոսի ընտրութիւնը կատարելուց յետոյ, մի շարք խորհրդակցութիւններ ունեցաւ և կայացրեց մի արձանագրութիւն ու յանձնեց այն պատգամաւորներին, որոնք օծման առիթով կը գնան Էջմիածին, ներկայացնել այդ արձանագրութիւնը և թեմական պատգամաւորական ժողովների որոշումները։ Արդ, օծման առիթով Էջմիածին եկած բոլոր մօտ 200 պատգամաւորների և ներկայացուցիչների մէջ միայն 3 հոգի կային համազգային ընտրողական ժողովի անդամներ, այն է՝ Երևանի պատգամաւոր Վ. Եղիազարեան, Ղարաբաղի պատգամաւոր Հ. Առաքելեան և Նիկոմեդիայի պատգամաւոր Յ. Ամիրխանեան։

Կաթողիկոսն ընդունեց հրաւիրվածներին Ծաղկեայ դահլիճում, ուր կայ դրված հայրապետական գահը, կաթողիկոսական բոլոր էմբլեմաներով։ Այս անգամ Մատթէոս II բազմել էր արդէն գահի վրա և ոչ նրա կողքին, մի այլ աթոռի վրա, ինչպէս անում էր մինչև օծումը։

Երբ ամենքը գահի երկու կողմերում շարվեցին, ժողովականներից առաջ եկան Վ. Եղիազարեան, Հ. Առաքելեան և Յ. Ամիրխանեան։

Վ. Եղիազարեան յայտնեց, թէ համազգային ընտրողական ժողովը պարտք է դրել իր և ընկերների վրա ներկայացրել իր խորհրդակցութեան արդիւնքը և կայացրած որոշումները՝ վերաբերեալ ազգային-եկեղեցական, տնտեսական, կալուածական, կրթական և վարչական գործերի բարեկարգման և բարւոքման, ինչպէս և Ռուսաստանի և Պարսկաստանի թեմերի պատգամաւորական ժողովների կայացրած որոշումները և արձանագրութիւնները։ Ապա Հ. Առաքելեան յայտնեց, թէ ի լրումն Եղիազարեանի ասածների՝ նա պարտք է համարում յայտնել Նորին Վեհափառութեան, որ թէև այդ որոշումների մէջ արտայայտված է հայ ժողովրդի կամքը, բայց համազգային ժողովը չը կամենալով ամենևին կաշկանդել հայրապետական իրաւասութիւնը՝ որոշել է ներկայացնել միայն իբրև իղձեր և ցանկութիւններ։

Կաթողիկոսը հրամայեց կարդալ այդ արձանագրութիւնները, որ ամենքը լսեն։ Հ. Առաքելեան կարդաց՝ 1) Համազգ. ընտրողական ժողովի 1908 թ. նոյեմբերի 1-ին կայացրած որոշումները (տպված «Մշակի» մէջ), 2) Ղարաբաղի, Երևանի, Ատրպատականի թեմական պատգամաւորական ժողովների որոշումները, 3) Ղարաբաղի, Երևանի, Բեսսարաբիայի, Աստրախանի, Բագուի, Ատրպատականի և Պարսկա-Հնդկաստանի թեմական պատգամաւորների հաւաքական զեկուցագիրը (բացառութեամբ Թիֆլիսի թեմի)։

Աւարտելով ընթերցումը Հ. Առաքելեան յանձնեց Կաթողիկոսին բոլոր այդ թղթերը։

Նորին Վեհափառութիւնը, հաւանութիւն տալով այդ որոշումներին, որոնց հիմնական միտքն է, ինչպէս յայտնի է, կազմակերպել եկեղեցական-վարչական գործերը ժողովրդական-դեմօկրատական հիմունքների վրա, դիմեց ժողովականներին և յայտնեց, որ երկու ամիս է արդէն, ինչ ինքն ամենայն ուշադրութեամբ ծանօթանում է այն գործերին, որոնց ինքը ղեկավար պէտք է հանդիսանայ այսուհետև, և գտել է, որ այդ գործերը անմխիթարական վիճակի մէջ են, խառնակ վիճակի մէջ են թէ կենտրոնում և թէ թեմերում. դպրոցները անբարեկարգ են և շատ սակաւ են տալիս սպասված արդիւնքը. եկեղեց.-կալուածների կառավարութիւնն ու շահագործումը շատ յոռի վիճակի մէջ են, ուստի, չը նայելով նրանց մեծ քանակին, արդիւնք չեն արտադրում։ Որովհետև եկեղեցին կազմում է ինքը ժողովուրդը, ուստի ժողովուրդը պէտք է մասնակցէ իր ազգային-եկեղեցական-վարչական և տնտեսական, դպրոցական գործերի կառավարութեանը, ինչպէս պահանջում է հայ եկեղեցու ոգին։ Այդ պատճառով էլ նա, Կաթողիկոսը, կամենում է լսել հաւաքվածների կարծիքները այդ մասին։ «Ես այժմ կը հեռանամ,—վերջացրեց նա,—իսկ դուք խորհրդակցեցէք և արդիւնքը զեկուցէք ինձ»։

Կաթողիկոսի մեկնումից յետոյ, ժողովականները ընտրեցին նախագահ տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսին, փոխ-նախագահ Բ. Դօլուխանեանին և քարտուղար Ս. Մալխասեանին։

Տեղապահը մի քանի պատշաճ խօսքերով բացատրեց խորհրդակցութեան նպատակը և առաջարկեց կարծիքներ յայտնել։ Խօսեցին Կարապետ վարդապետ, Հ. Առաքելեան, Կ. Խատիսեան, Ալ. Խատիսեան, ինժ. Ղոնդաղսազեան, Գ. Կոստանեան և ուրիշներ։ Ի վերջոյ ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ հարկաւոր է կազմել մի մասնաժողով այն անձերից, որոնք ցանկութիւն կը յայտնեն մնալ Էջմիածնում 5—6 օր, և յանձնել այդ մասնաժողովին մշակել մի քանի կարևոր հարցերի մասին զեկուցագիր ու ներկայացնել Կաթողիկոսին այն մտքով, որ այդ հարցերի վերջնական մշակումը և լուծումը կատարվի ապագայում օրինաւորապէս ընտրված և ժողովրդի կամքն արտայայտող ժողովի ձեռքով։ Ապա ժողովը որոշեց, որ մասնաժողովին մասնակցեն և Էջմիածնի միաբանութեան կողմից ընտրված ներկայացուցիչներ, նոյն թւով, որքան կը լինեն աշխարհականները։

Մասնաժողովի անդամներ ընտրվեցին Հ. Առաքելեան, Վ. Եղիազարեան, Ա. Բաբախանեան, Յ. Սաղաթէլեան, Գ. Եւանգուլեան և Ս. Տիգրանեան:

Իսկ Էջմիածնի միաբանութիւնը Կաթողիկոսի հրամանով նոյն օրը երեկոյեան ժողով գումարելով ընտրեց գաղտնի քուէարկութեամբ ներկայացուցիչներ Խորէն, Կարապետ, Գարեգին, Մատթէոս, Մեսրոպ և Ներսէս վարդապետներին:

Ժողովից յետոյ սեղանատան, ժամը 2-ին տեղի ունեցաւ ճաշ, որին մասնակցում էին 150 անձինք:

Բայց այդ ճաշկերոյթի և արտասանած ճառերի ու առաջարկած կենացների մասին յաջորդ անգամ:

Ընտրված մասնաժողովը անմիջապէս սկսեց իր գործունէութիւնը, որ շատ համեստ շրջանակի մէջ է ամփոփել,—յայտնել կարծիքներ մի քանի անյետաձգելի հարցերի մասին եկեղեցական-վարչական և տնտեսական (կալուածների կառավարութեան) գործերի բարեկարգման մասին:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 17 սեպտեմբերի

Անձնասպանութիւն գործեց սենատոր Կովալենսկին, այն կորնէտի և պաժի հայրը, որոնք քրէական դատի էին ենթարկված Նադէժդինսկայա փողոցի վրա եղած անկարգութիւնների գործի համար: (Հ. Գ.)

Տաշքէնդ, 17 սեպտեմբերի

Քաղաքային դուման ընդհանուր ուսումը կազմակերպելու նպատակով որոշեց 110,000 ր. յատկացնել դպրոցական ցանցը ընդարձակելու նպատակով: (Հ. Գ.)

Կէրչ, 17 սեպտեմբերի

Սաստիկ անձրևի պատճառով քաղաքը հեղեղված է: Մի քանի փողոցներ ջրի տակն են: Հաղորդակցութիւնը կենտրոնական մասի հետ կատարվում է «դրօգներով» և «տաչկաներով»: Ներքնատները և ստորին յարկերը լցված են ջրով. պօստային գրասենեակը կործված է: Վնասվեցին աղքատները, ստորին մասերում ապրողները: (Հ. Գ.)

Մադրիդ, 17 սեպտեմբերի

Գուրուգուի դէմ մղվող կռիւների մէջ մասնակցեցին հետևակ զօրքի 16 վաշտ, արտիլերիայի 3 բատարէա, հեծելազօրքի 3 էսկադրօն և սապէօրների մի զօրաբաժին: Նոր դիրքը, որի մօտ թողված են 4 վաշտ, իսկոյն և եթ ամրացվեց: (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 17 սեպտեմբերի

Մէջլիսի պատգամաւորներ ընտրված են 15 հոգի, որոնց թւում Մուստաֆար-ուդ-Դովլէ, Ադիգադէ, Միրզա-Իսմայիլ, Նուբէրի և Թէհրանի գերմանական միսիայում ծառայող Միրզա-Րիզա: (Հ. Գ.)

Թաւրիզ, 17 սեպտեմբերի

Ուրմիայի նահանգապետ Մօխտէսամ-ուս-Սալթանէին, որը ճանապարհ ընկաւ իր պաշտօնատեղին Խօյի և Սալմաստի վրայով, տեղական ֆէդայիները չը թողին, որ Խօյ մտնի: Ատրպատականի գեներալ-նահանգապետը ուղարկեց զինաթափ անելու համար Սայդուլ-Մէմալիքին, ուրմիական ֆէդայիների նախկին պարագլխին: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 17 սեպտեմբերի

Թիւրքական արտակարգ դեսպանութիւնը, ծանուցում ստանալով թէ երբ կընդունվի նա Լիվադիայում Կայսրի կողմից, իր ուղևորութեան օրը նշանակեց սեպտեմբերի 22-ը: Նախընթաց օրը Լիվադիա է ուղևորվում «Զապորոժէց» պահականաւով ռուսական դեսպան Զարիկօվ: (Հ. Գ.)

Ֆրանսիական մամուլը մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի այն փաստը, որ Թիւրքաց գեներալիսիմուս Շէվքէթ փաշան այսքան երկար մնում է Գերմանիայում: Ֆրանսիացի մի թղթակից առիթ ունեցաւ հարցմունք ուղղելու դրա մասին Շէվքէթ փաշային: Փաշան պատասխանեց. «Ես ճանապարհորդում եմ ոչ որպէս դիպլօմատ, այլ որպէս զինուոր: Ես ներկայ էի գերմանական զօրախաղերին, ապա պատրաստվում եմ այցելել Կրուպպի գործարանները, որոնց մի քանի օր կը նուիրեմ, ապա կերթամ Շատուգարդ, ուր խիստ շատ լաւ ծանօթներ ունեմ: Ուր որ էլ անցնելու լինեմ, ես թոյլտուութիւն ունեմ Վիլհէլմ կայսրից և մանրամասն ծանօթանում եմ զինուորական զօրանոցների սարքը ու կարգի հետ և թէ ինչպէս է դրված ինտենդանտական գործը»:

Չը նայելով Շէվքէթ փաշայի այդ հանգստացուցիչ խօսքերին, ֆրանսիական մամուլը պնդում է, որ Թիւրքիան, յանձին Մէհմէդ-Շէվքէթ փաշայի, բազմամիլիոն պատուէր է տալիս Գերմանիային զանազան թնդանօթներ և ռազմամթերքներ պատրաստելու համար:

Բեռլինի «Local-Anzeiger» լրագրի խօսքով, Կ. Պօլսում այս օրերս բացվեց մի նշանաւոր քաղաքական դաւադրութիւն, որի գլուխ կանգնած էր «Սերբէստի» խմբագիր Հիւսէին Հիլմի-բէյ: Վերջինս, ձերբակալվելուց յետոյ, խոստովանվեց, որ ինքն կազմակերպել է մի ընկերութիւն, որի նպատակն է կռիւ մղել սահմանադրական կառավարութեան եղանակի դէմ և այդ բանի համար վճռված էր դիմել մի շարք տէրրօրիստական գործերի: Դատապարտված անձերի ցուցակում գտնըվում էին, ի միջի այլոց, Մահմուդ-Շէվքէթ փաշա, Էնվէր-բէյ և Նիազի-բէյ, որոնք պաշտպանում են «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէի գաղափարները: Դաւադրութեան բացումը, Բեռլինի օրգանի խօսքով, ահագին տպաւորութիւն գործեց Բօսֆօրի ափերի վրա:

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 9 սեպտ.

Սակըզ Աղաճիի պատրիարքը, Սապպաղեան, Հռոմ ղրկած է իր հրաժարականը: Հայ-կաթոլիկ հասարակութիւնը, իր բոլոր դասակարգերովը, շատ ուրախ է այդ մասին: Մեծ յոյս կայ, որ կարդինալներու ժողովը, որու քննութեանը կը յանձնուի պատրիարքին հրաժարագիրը, ընդունելի կը դատէ ու ըստ այնմ պիտի տեղեկագրէ ս. քահանայապետին:

Սապպաղեան պատրիարք, իբրև պատճառ, իր հրաժարագրին մէջ նշանակած է տարիքին յառաջացումը՝ ծածկելով բուն շարժառիթը, որ է իր ինքնակամ վարմունքը, համիդեան դրութեան համեմատ: Արդէն չորս տարիէն աւելի է, որ, կըսուի, մեծ անհամաձայնութիւն կար պատրիարքին ու ժողովներու մէջ: Սահմանադրութենէն առաջ ժամանակը աննպաստ էր բողոքի, դժգոհութեան ձայներ բարձրացնելու, որով պատրիարքը, իր ուզած ձևովը, ինքնօրէն, անկախ գործեց ու մնաց աթոռին վրայ: Սահմանադրութեան շրջանի մէջ՝ հայ-կաթոլիկ հասարակութիւնն այնքան անտարբեր վերաբերութիւն ունեցաւ դէպի պատրիարքն ու եկեղեցին, որ պապը ուշադրութիւն դարձուց այդ տխրող վիճակի վրայ:

Երբեք կասկած չկայ, որ պապը, առանց ուէ առարկութեան, պիտի ընդունի պատրիարքին հրաժարականը, որովհետև գանգատները, լուրն ճամբով, ժամանակին գացած են Հռոմ, և պապը անուղղակի զգացուցած է Սապպաղեանի, որ հրաժարի առանց այլևայլի: Այդ թելադրութեամբ գրած էր պատրիարքը իր հրաժարականը նախապէս պապին: Քանի մը օրէն ալ հրաժարագրին մէկ օրինակը պիտի մատուցանէ Բ. Դրանը:

Պատրիարքական հաւանական թեկնածուն է Թերզեան արքեպիսկոպոս, այժմ Ադանայի առաջնորդ: Սապպաղեանէ առաջ պատրիարքական միակ ընտրելին էր ան, բայց, իբրև ազատական անձնաւորութիւն, հաճելի չէր Համիդի դրանիկներուն, որով ընտրուեցաւ Կեսարիոյ այդ ծերուկ առաջնորդը, որուն բովանդակ արժանիքն էր՝ գրած ըլլալ հայերէն տառերով թիւրքաբարբառ Աստուածաբանութիւն մը: Անշուշտ ամենքիս ալ ցանկալի է ազատամիտ հոգևորականի մը պատրիարքութիւնը, ժամանակի ոգիին համապատասխան: Թերզեան, Ադանայի վերջին շարժումներու մէջ, գործակցեցաւ լուսաւորչական հոգևորական իշխանութեան հետ և համախորհուրդ շարժեցաւ: Այդպիսի հոգևորականի մը գոյութիւնը, մանաւանդ պատրիարքական աթոռի վրայ, ցանկալի է. իր ուղղութիւնը կըլլայ անշուշտ ամեն առաջնորդներուն ուղղութիւնը, և ազգը, ամեն կէտերու վրայ, կը սկսի նոր կեանք մը՝ վերածնուելու համար մոլեռանդութեան, կրօնական փծուն հարցերու քանդումին վրայ:

Ամենէ առաջ հայ-կաթոլիկ հասարակութիւնը ինքն ալ պէտք ունի հայրենասէր-ազատամիտ պատրիարքի մը: Անհրաժեշտ կարիք կայ, որ Հռոմի իրաւասութեանց մասին նոր կարգադրութիւններ ձեռք բերուին: Այդ հասարակութիւնը այսօր ազգային ոչ մէկ բան չունի. եկեղեցի, դպրոց, կալուած՝ ամենն ալ պապի սեփականութիւնն են: Այն օրը, ուր կրօնական ազատ շունչ մը փչէ հայ-կաթոլիկ հասարակութեան վրայ, փոխանակ պապի ձեռքով, միմիայն իր սեփական առաջնորդութեամբը անդրշիրիմեան ճամբորդութեանը ուղեցոյց կանգնելու, և կամ թերևս նեղ գտնէ իր հոգեկան պահանջքներուն հռոմէական գաւիթը, այդ օրը իր ունեցածներէն ոչ մէկ շէնքի իսկ տէրը չէ. Թողլով իր եկեղեցին, դպրոցը, կալուածները, վանեցոց բացառութեանը համեմատ, տկլոր դուրս պիտի ելլէ, չնայելով որ այդ ամենը հասարակութեան դրամովը կանգնած են:

Ազատամիտ պատրիարքի մը առաջին խորհրդածութեանը նիւթ է Գաղատիոյ կաթոլիկ հայերու հոգեկան վիճակը: Գաղատիա, համանուն նահանգին մէջ, իսկապէս հայաքաղաք մըն է, մեծամասնութիւնը, ¾ մասը, ըլլալով հայ կաթոլիկ: Ասոնք թիւրքաբարբառ են, իրենց հոգևորական տեսչութիւնը յանձնուած է լատին կրօնաւորներու. Սակըզ-Աղաճիի պատրիարքարանը մեծ ազդեցութիւն ունեցած չէ և կամ հարկ տեսած չէ իր բարոյական ազդեցութիւնը տարածելու Գաղատիոյ վրայ: Առաջին առիթով պէտք է հայ լեզուն տարածել անոնց մէջ, երկրորդ շարժումով իրենց հոգևորական տեսչութիւնը ձեռք բերել և այդպէս հասցնել այն վիճակին, ուր կը գտնուի այսօր հայ կաթոլիկ հասարակութիւնը: Վենետիկոյ և Վիեննայի Մխիթարեան հայրերը մեծ պարտականութիւն ունին այդ նորածնութեան գործին մէջ:

Գաղատիոյ հայերը անոնք են, որ նախորդ Մատթէոս I կաթողիկոսի պատրիարքութեան օրով, կրօնական հալածանքի ատեն, յունվարի մէջ, Պօլսէն ճամբայ հանուած են 1846 թուին: Այդ հալածանքը շատ ցաւագին տպաւորութիւն պէտք է թողած ըլլայ միտքերու վրայ, այնպէս որ խեղճ հայերը, մէկ կողմէ ենթակայ լատին կրօնաւորներու մեքենայութեանցը, միւս կողմէ ենթակայ հալածանքի, դառնապէս վշտացած են մայր-ազգութեան դէմ: Իրենց առաջին գործը եղած է թողուլ մայրենի լեզուն և թիւրքերէնը որդեգրել, երկրորդ գործը եղած է հոգևորական կապերով հաստատուիլ միմիայն լատին կրօնաւորներու հետ: Տակաւին այսօր ալ Գաղատիայի կաթոլիկ հայութիւնը, հին սերունդը մանաւանդ, յոյներու հետ յարաբերութիւնը աւելի նախապատիւ կը համարի, քան թէ իր ազգակից հայերու հետ:

Հիմա որ սահմանադրութիւնը նոր կեանք կը բերէ, քաղաքական նոր հայեացքներ դէպի հայերը, և մանաւանդ որ կրօնական հալածանքի ցաւերը ալ պատմութեան մէջ ունին իրենց նշանակութիւնը, կարելի է նոր շարժում դնել այդ հայութեան մէջ, և այդ բանը կրնայ մեծապէս յաջողիլ կաթոլիկ ազատամիտ-ազգասէր պատրիարքի մը ձեռքով: Այդ նկատումներով, ամենէն յարմարագոյնը կը համարուի Թերզեան արքեպիսկոպոսը:

«Հայրենիքի» և «Ազատամարտի» մէջ սկսուած պայքարը հետզհետէ աւելի կը տաքնայ: «Հայրենիք», «Salonique» թերթին մէջ հրատարակուած համաձայնութեան պայմանագիրը *) բոլորովին հակառակ գտնելով «Ազատամարտի» մէջ գրուած օրինակին, ծանր դիտողութիւններ ըրաւ, կարծելով որ «Salonique» ֆրանսերէն թերթը, Սելանիկի կոմիտէին բերանն է: «Ազատամարտ» թիւրքերէն և հայերէն բնագիրները քով քովի հրատարակելով՝ ուզեց հասկցնել, թէ «Հայրենիք» կը սխալի: «Հայրենիք», առանց ուզելու հրատարակելու. երկու բնագիրները, ձևով մը իր արդէն գրածին վրայ կը պնդէ: Իր գլխաւոր սխալը հոն է, որ «Salonique» թերթը կը համարի օսմ. կոմիտէի բերան, մինչդեռ հրէական թերթ մըն է:

Պայքարին այս կերպ շարունակութիւնը հաճելի չպիտի ըլլայ անշուշտ, մինչդեռ մենք կը փափագինք, որ Պօլսի այդ երկու թերթերը աւելի համերաշխ երթան, պահելով նաև իրենց ինքնութիւնը:

Շաւէն

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Կ. Պօլիս, 5 սեպտեմբերի

Ամսիս 4-ին, ուրբաթ, գումարվեց թիւրքահայերի ազգային երեսփոխանական ընդ. ժողովը առանց պատրիարքի, և դա շատ աչք էր ընկնում, որովհետև առաջին անգամ էր, որ առանց պատրիարքի կամ ուրիշ սրբազան նախագահի՝ ազգ. ժողով էր գումարվում:

Նիստի գլխաւոր հարցն էր պատրիարքի հրաժարականը, որի մասին վարչութեան ատենապետ Գարեգին Սոսեֆեան մանրամասն յայտնեց թէ ինչ պատճառներից մղված՝ պատրիարքն ստիպվեց հրաժարականը տալ կառավարութեանը: Ժողովը թէև մի քիչ աղմկալից եղաւ, բայց յետոյ միաձայնութեամբ հաւանութիւն տուեց վարչութեան ընթացքին, ցաւ յայտնեց Դուրեան պատրիարքի վաղահաս հրաժարման համար և, նկատելով որ նա իր հրաժարականը ազգին չէ տուած, այլ կառավարութեան, հաշւեց նրան անձնագիր պատրիարք և որոշեց, որ վարչութիւնն իր գործառութիւնները շարունակէ, կատարէ իր բանակցութիւնները կառավարութեան հետ և, եթէ գոհացուցիչ ելքի հասնի, այդ դէպքում պատրիարքին հրաւիրել իր աթոռը, եթէ ոչ՝ հակառակ պարագային, պէտք է որ վարչութիւնն էլ իր հրաժարականը ուղարկէ կառավարութեանը:

Վարչութեան հրաժարականից յետոյ ազգ. երեսփոխանութիւնն էլ հանդիսաւորապէս իր բողոքական հրաժարականը պիտի տայ, որից յետոյ՝ չեմ իմանում ո՞ւր է գնալու վերջանալու գործերի ընթացքը: Ցանկալի էր, որ կառավարութիւնը շրջահայեաց ու իմաստուն լինէր և ջանար հայոց պատրիարքին գոհացում տալ:

Այս գիշեր ազգ. կրօն. և քաղ. ժողովների անդամներից երեքական հոգի հրաւիրուել են մեծ-վէզիր Հիլմի փաշայի մօտ՝ մտածելու և խօսելու պատրիարքի հրաժարականի հարցի մասին:

Թուխակ

---

*) «Ազատամարտի» կուսակցութիւնը օսմ. կոմիտէի հետ համաձայնութեան պայմանագիր մը կնքած էր և օրինակը հրատարակած իր թերթին մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺ. ԿԵՆՏ. ՃԵՄԱՐԱՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Մեզանում երկար ժամանակ ընդհանրացած կարծիք էր, թէ ուսուցչութիւն անելու համար մասնագիտական պատրաստութիւն ունենալը այնքան էլ անհրաժեշտ բան չէ: Ամեն տարի տասնեակ երիտասարդներ, աւարտելով մեր թեմ. դպրոցները, յաճախ նոյնիսկ ծանօթութիւն չունենալով մանկավարժական տարրական գիտելիքներից, իրանց նուիրում են ուսուցչութեան: Այդ սկսնակ երիտասարդներից ճարպիկները, որպէսզի կարողանան տեղ գտնել մեր ծխ. դպրոցներում, իսկոյն մէջ են գցում իրանց ծանօթ, բարեկամ մարդկանց և նրանց միջոցով մի կերպ պաշտօն գտնում: Բայց թէ այդպիսի անհատը ծանօթ է մանկական հոգեբանութեան ընդհանուր օրէնքների հետ, յայտնի՞ է նրան մարդուս կեանքի զանազան տարիների հոգեկան զարգացման առանձնայատկութիւնները, գիտէ՞ դպրոցական ամենատարրական առողջապահական կանոնները, ծանօթ են նրան այն դպրոցական կեանքի բոլոր պահանջներն ու կանոնները, ուր պաշտօնավարելու է, արդեօք վստա՞հ է իր աւանդելիք առարկայի մասին ունեցած պատրաստութեան մէջ և այլն,—այդպիսի հարցերի մասին ո՛չ ուսուցիչը և ո՛չ էլ հոգաբարձութիւնը չեն մտածում և կարծես աւելորդ էլ են համարում այդպիսի մանր խնդիրներով զբաղվել:

Դպրոցական կեանքում նրանք այդ առարկաները չեն անցել և կարծես ենթադրվելիս լինէր թէ սկսնակ ուսուցչին այդ բաները պէտք էլ չեն, որովհետև դրանց մասին հոգատարութիւնը պատկանում է տեսչին կամ աւ.-ուսուցչին: Իրականութիւնը ցոյց է տալիս, որ ոչ մի փորձառութիւն չունեցող նոր աւարտած երիտասարդը շատ անգամ համարձակվում է իր թեկնածութիւնը դնել այս կամ այն դպրոցի աւ.-ուսուցչութեան համար: Թէ ինչ դրական օգուտներ կարող է ստանալ դպրոցը այդպիսի խեղճ աւ.-ուսուցչից, առանց մարգարէ լինելու էլ կարելի է գուշակել: Մեր արդի ծխ. դպրոցների ուսուցիչների մեծագոյն մասը շատ քիչ է թափանցել կրթութեան, դաստիարակութեան հիմնական սկզբունքների մէջ:

Մեր թէ անցեալ և թէ ներկայ յայտնի մանկավարժներից շատերը քանիցս խօսել են մեր այդ ցաւոտ կողմի մասին: Վաղուց մեզանում մանկավարժական ճեմարաններ հիմնելը անհրաժեշտ պահանջ է դառել: Այդ տեսակէտից թէ ինչ օգուտներ է տուել Ներսիսեան դպրոցի մանկավարժական դասարանը և թէ ինչ հիմքերի վրա է դրըված, չեմ կարող հաստատապէս բան ասել, սակայն անկասկած եմ, որ նրա տուած օգուտը անհամեմատ մեծ է: Պէտք է պարզ լինի մեզ համար, որ կրթութիւնը իր նպատակին հասած կը լինի այն ժամանակ միայն, երբ նա կարողանայ ուսուցիչների միջոցով առաջ բերել թէ մտաւոր և թէ ֆիզիքապէս պատրաստված առողջ աշակերտներ:

Մեր ծխ. և թեմ. դպրոցների բազմամեայ գոյութեան ընթացքում՝ մենք անկարող եղանք հայ ուսուցչի ձեռքը տալ մի որևէ մանկավարժական գիտական գիրք: Մինչև այսօր չունենք մի այնպիսի հիմնարկութիւն, ուր քննվէին մանկավարժական հիմնական գաղափարները, չունենք մարդիկ, մանկավարժներ, որոնք առանձնապէս զբաղվէին յիշեալ առարկաներով: Եւ այդ ծանր բեռը մինչև օրս էլ դրված է մեր դպրոցի վրա: Մեր երկրի ապագան կախված է մեր ապագայ սերնդից: Մեր գոյութեան կռիւը ստիպում է մեզ անել այն, ինչ որ ցայսօր չենք արել, այն է՝ կրթութիւնը դարձնել ընդհանուր, դպրոցին տալ իր գիտուն ուսուցիչներով նոր հոգի և ամեն տեղ լայն կերպով քարոզել կրթութեան անհրաժեշտութիւնը: Այս բոլորն անելու համար անպայման պէտք են իրանց կոչմանը իսկապէս համապատասխանող մանկավարժ-հիմնադիրներ, որպէսզի դրանք իրանց հեղինակութեամբ հիմք դառնան հայ մանկավարժութեան:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հիմնել մի մանկավարժական կենտրոնական ճեմարան, որտեղ անպայման պիտի աւանդվէին մանկավարժ. հոգեբանութիւն, դպրոցական առողջապահութիւն, մանկավարժ. թէօրիայի պատմութիւն, բժշկականութիւն, կուլտուրայի պատմութիւն, իրաւաբանութիւն, այլև գիւղատնտեսական որոշ ճիւղեր, ինչպէս են մեղուաբուծութիւն, կաթնատնտեսութիւն, անասնապահութիւն, թռչնաբուծութիւն, այգեգործութիւն և այլն, ի հարկէ կարելոյն չափ:

Իմանալով մեր դպրոցական գործի պատմութիւնը, դժուար չէ գուշակել, որ մեր մանկավարժական կենտրոնական ճեմարանը դեռ են շատ ջուր կը ծծէ, սակայն մի բան միայն կարող ենք ասել, որ միահամուռ ույժերով կարող կը լինենք մեր այդ ցաւոտ կողմը դարմանել:

Առաջ անցէք, հայ ուսուցչական ասպարէզի մէջ յայտնի մանկավարժներ, և հիմք դրէք այդ սուրբ և մեծ գործին:

Ս. քհ. Տէր-Յովհաննիսեանց

Ստաւրոպոլ

ՄԵՐ ԱՅԺՄԵԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է եղել մեզանից առաջ քահանան, երբ ժողովրդի մէջ համեմատաբար գիտուն, ուսեալ, նոյնիսկ գրագէտ մարդիկ շատ պակաս էին, երբ տիրող մահմեդական իշխանութիւնը մեր ներքին դատավարութիւնը մեր հոգևորականութեանն էր թողած, երբ աշխարհիկ վարժապետներ չը կային, ուսուցչութիւնն էլ կազմում էր հոգևորականութեան մենաշնորհը. այո, ինչ է եղել այն ժամանակ մեզանից առաջ քահանան՝ թողնենք մի կողմը. առնենք թէ ինչ յատուկ պարտաւորութիւններ ունի մեր օրերում քահանան ընդհանուր առմամբ:

Կեանքը փոխվել է այժմ: Դպրոցական-ուսուցչական ասպարէզի վրա հանդէս են եկել աշխարհիկ ուսուցիչ և ուսուցչուհիները: Քրիստոնեայ տէրութեան մէջ ընդհանուր, ամենքի համար մատչելի և հաւասարազօր պետական ու միջնորդ դատաբանները չէզոքացրել, բարձել են հոգևոր դատաւորների միջամտութեան կարիքը: Մամուլն իր յարմարութիւններով ստանձնել է ժողովրդին առաջնորդելու, ղեկավարելու, կոչեր ուղղելու, խարազանելու, քարոզելու, խրատելու դերը, պաշտօնը: Բարեգործական, մարդասիրական, որբախնամ, փոխադարձ օգնութեան և այլ ապաստարանները, հաստատութիւններն ու ընկերութիւնները իրանց վրա են առել խեղճերին, թշուառներին, աղքատներին, որբերին խնամելու, օգնելու, հովանաւորելու և պատսպարելու հոգատարութիւնները: Նոյնիսկ մեր եկեղեցական դպրոցներում կրօնի դասերին տիրել են անփառաջայ ընկերներ ու պարոնները: Իսկ վարչական ասպարէզում քահանան չունի պաշտօն: Նա, լինելով ժողովրդից ընտրված, դատապարտված է կալ-մալու ժողովրդից չընտրված յաջորդ, առաջնորդ իշխանաւորի հլու կամակատար, սպասաւոր: Այս սահմաններից ու կաշկանդումներից մազաչափ անգամ դուրս չէ քահանայի իբրև խորհրդական՝ կոնսիստօրիաներում կամ հոգևոր կառավարութիւններում՝ անդամակցելը կամ գործակալական պաշտօնավարութիւնը: Այս բոլորի հետ միատեղ՝ կամայական, պատահական, քմահաճ, անորոշ, ապա՝ և՛ սակարկելի, և՛ անվայել, և՛ անբաւարար են քահանայի եկամուտի աղբիւրները, ապրուստի միջոցները:

Այժմ քահանային մնացած է միայն հասարակաց ժամասացութիւն առանց հասարակաց մասնակցութեան, թաղում, մկրտութիւն, պսակ, մի խօսքով՝ լոկ ծիսակատարութիւն:

Արդ, երբ կեանքի մեր այժմեան իրական պայմաններն այս են ներկայացնում քահանայութեան համար, միթէ կարելի է սպասել, որ կրթված, ուսեալ, գիտուն քահանաների թիւը շատանայ, միթէ նոյնիսկ արդարութիւն է պահանջել, որ կրթված, ուսեալ, գիտուն մարդիկ քահանայ դառնան:

Պահանջներ անելուց, հրամաններ արձակելուց, դատաստանական վճիռներ կայացնելուց առաջ արդարամտութիւնը թելադրում է նախապէս քննութեան առնել, ի նկատի ունենալ քահանայի իսկական իրաւական, նիւթական ու կենցաղական պայմանները:

Սակայն ըստ հոգելոյս «Հայրիկ-Հայրապետի»՝ «Ամուսնաւոր հոգևորականութիւնը տակաւին տէր ունի ազգի համար. անոնք են շահով ալ, կեանքով ալ ազգին էն հարազատը»:

Եթէ անկեղծ են այն ձայները, որոնք ցանկութիւն, պահանջ են յայտնում, որ քահանայական դասը զտվի, մաքրվի, բարձրանայ և կանգնի իր կոչման բարձրութեան վրա, ապա այդ ձայները պիտի բարձր հնչեն և այդ դասի իրաւական, նիւթական ու կենցաղական պայմանները բարելաւելու անդադրում պահանջներ անեն, ուղիներ բանան և վիճակ ստեղծեն:

Եւ այդ ուղին կայ, բայց կեանքի ձախորդ ու պղտոր անցեալը հեղեղել, քանդել, խափան է դարձրել. պէտք է մաքրել այն՝ մեր ազգային նախնի եկեղեցու հարազատ ցուցումների համեմատ:

Մեր նախնի ազգային եկեղեցին կուսակրօն հոգևորականին կենդանի ժողովրդի մէջ ապրելու, վարչական պաշտօն ունենալու իրաւունքներից իսպառ զրկած է եղել: Կուսակրօնը կեանքից հեռու, իր վանքի մէջ պիտի ապրէր, աղօթէր, մտածէր, տքնէր ու մեռնէր: Եթէ երբեմն երբեմն՝ իբրև մաքուր, անաչառ ձայն ու բարբառ գաղափարի ժողովրդին հնչելու, խօսելու կարիք ներկայանար, յատուկ թոյլտուութեամբ պիտի գնար վեղարն աչքերին քաշած՝ իր քարոզը տար, իր կրակոտ խօսքն ասէր, իր մաքրող ու ախտահանող խարազանը շարժէր և անմիջապէս վերադառնար իր վանքը:

Աշխարհի մէջ եկեղեցու հովիւը, առաջնորդը, ղեկավարը, պաշտօններ վարողը՝ էր միայն ու միայն ժողովրդի կողմից ընտրըված ամուսնաւոր հոգևորականը՝ լինի նա սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս թէ նոյնիսկ հայրապետ. միայն այս վերջինս հայրապետ ընտրվելուց յետոյ և օծումն ընդունելուց առաջ հրաժարվում էր ընտանիքից։ Կուսակրօնութիւնը վանական-անապատական առանձնական կեանքի հրամայական պայմանն էր։ Քրիստոս իրանից յետոյ իր կողմից աշխարհի մէջ իր վարդապետութիւնը, իր գործը շարունակող իր աշակերտներին այնքան որոշ ու պարզ խօսեց ամուսնութեան և ամուրիութեան մասին, որ այլևս ոչ ոք իրաւունք չունի մտքեր պղտորելու։ Նա հասարակական գործիչից պահանջում էր անարատ բարոյականութիւն. իսկ ամուսնութիւնը բնաւ արատ չը համարեց։ Ով կարող է տանել ամուրիութիւնը՝ թող նա մնայ ամուրի. բայց ամուրի մնալու համար նա առաւելութիւն չը տուեց ամուսնացածների նկատմամբ և ոչ էլ ամուսնացած ու չամուսնացածների համար գործունէութեան ասպարէզներն ու աստիճանները իրարից բաժանեց։

Եպիսկոպոսի համար առաքելական բացարձակ պահանջ ու պայման է. «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ (և ոչ բազմակին) այր... զի խրատ տանն իւր բարւոք վերակացու լեալ իցէ, որդեակս ունիցի, որ ի հնազանդութեան կայցեն... Ապա եթէ ոք իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի»։

Չը նայած մեր եկեղեցու գլուխ Քրիստոսի բացարձակ պատուէրին, չը նայած եկեղեցու հիմնադիր առաքեալի պարզ ու որոշ պայմանին, չը նայած մեր եկեղեցու ժողովրդական հոգուն, այսօր եպիսկոպոսութիւնը դարձած է մենաշնորհութիւն կուսակրօնների. այսօր աշխարհի մէջ իշխանապէս ապրելը, աջ ու ձախ հրամաններ արձակելը, մի խօսքով՝ «Աստուծոյ եկեղեցու խնամակալութիւնը» իրանց մենաշնորհն են դարձրել հէնց ըստ երևոյթին նոյնիսկ և «ոչ միոյ կնոջ այր», անորդի, անզաւակ կուսակրօնները, խլելով, յափշտակելով այդ ամենը ամուսնաւոր հոգևորականների ձեռքից։

Քահանաների գործունէութեան ասպարէզն առաւել ընդարձակ, հրապուրիչ և նպատակաւոր դարձնելու համար անհրաժեշտ է սրբութեամբ ունկնդրել քրիստոսական պատուիրանին, հնազանդել առաքելադիր պայմանին. անհրաժեշտ է վերադառնալ նախնի եկեղեցուն։

Պէտք է կուսակրօններին, վանականներին թողնել վանքը, ուր միաբանօրէն ապրելու համար, ուր գաղափարական անձնազոհումի կեանք ապրելու համար հրամայական յարմարութիւն է ամուրիների համայնակեցութիւնը, միաբանակցութիւնը։ Թող այդ վանքերը հանդիսանան մի-մի օրինակելի ագարակներ, ուր մասնագէտ կուսակրօններ՝ աշխարհի վայելքները մոռացած՝ օրն ի բուն նուիրվեն այդ վանք-ագարակների մէջ բարոյական ու ֆիզիքական աշխարհի համար մտքեր, ընթացքներ, տունկեր, բոյսեր, համակարգութիւններ մշակելուն, աճեցնելուն, հասցնելուն։

Պէտք է քահանաների առաջ լայն բանալ եկեղեցու վարչական բոլորատեսակ պաշտօնեաների աստիճանները և թոյլ տալ, որ ժողովրդի քուէներով ընտրված արժանաւորները գնան բազմեն առաջարկված աթոռի վրա։ Պէտք է կրօնուսուցչական պարտաւորութիւնը թէ եկեղեցում և թէ դպրոցներում անբաժանօրէն միացնել քահանայի պարտաւորութիւնների հետ։ Պէտք է քահանայական եկամուտները ամենուրեք՝ քաղաքում թէ գիւղում՝ մաքուր, որոշ, կանոնաւոր և բաւարար դարձնել։ Պէտք է քահանայացուների կամ՝ աւելի ուղիղը՝ քահանայութեան հրաւիրվողների գիտելիքները բարձրացնել և միջնակարգ դպրոցների շրջանը ամենապակաս չափը դարձնել։ Պէտք է քահանաների ընտրութեան խնդիրը կարգաւորել և անպատճառ համայնօրէն, այլ ոչ ծխականօրէն, տալ կատարել և պէտք է քահանայական որոշ շտատներ տալ կազմել և ամեն միջոց գործ դնել շտատից դուրս ոչ մի ձեռնադրութեան իրաւունք չը տալ, յարմարութիւն չը թողնել։

Այո, ընդարձակելով քահանայութեան առաջ գործունէութեան ասպարէզը և ազնուացնելով ու անորոշութիւնից, պատահականութիւնից, կամայականութիւնից ազատելով քահանայի եկամուտները՝ հնարաւոր կը լինի հրապուրիչ դարձնել գիտուն, պատուաճանաչ ու շիտակ անձերի համար. այլապէս այնպէս, ինչպէս որ այսօր կայ, ինչ պայմանների մէջ որ այսօր գտնվում է քահանան, կը լինի ու կը մնայ այն՝ քահանայութիւնը՝ բաժին մութ ու անարժան անձերի։

Ժողովրդի քուէներով եկեղեցու հովուութեան կոչված ու իր գործունէութեամբ բարի համբաւ հանած՝ ազնիւ վաստակներ ցոյց տուած քահանաներից յաջորդական-փոխանորդական շրջանը կընտրի տեսուչ, հովիւ, թեմական յաջորդական վիճակի։ Այս վիճակաւորութեան ասպարէզներում բարի համբաւ վաստակած, աշխատասիրութիւն, արդիւնք ցոյց տուած քահանաներից թեմը կընտրի թեմական առաջնորդ, և Հայաստանը՝ կամբառնայ եպիսկոպոսութեան աստիճանի։ Արժանաւոր այսպիսի եպիսկոպոսներից ազգը իր քուէներով կընտրի պատրիարք ու կաթողիկոս։ Սրանով չեն զրկվում և յայտնի վաստակաւոր կուսակրօնները հայրապետական ու պատրիարքական թեկնածու լինելուց։

Բուէների այդքան բովերից անցնելը՝ շատ են ապահովում ընտրելիի արժանաւոր լինելը։ Միևնոյն ժամանակ քահանայութեան համար այդքան լայն ասպարէզ բանալը՝ շատ է ապահովում քահանայական դասի զտվելը, ազնուանալը։

Իսկ եկեղեցին ու կրօնը ժողովրդի առաջ կենդանի անձնաւորողը քահանան է։ Սա է Քրիստոսի ակնարկած աղը, որ պէտք է ամեն կերպ ջանալ համով պահելու, համով անելու համար։

Մէտ

ՀԵՂԵՂ ԲԱԳՈՒՈՒՄ

Բագուի կայարանից հեռագրում են սեպտ. 17-ից, որ մօտաւորապէս առաւօտեան ժամը 8-ին Բագուի կայարանի վրայով և շրջակայքում անցաւ սոսկալի հեղեղ։ Մի ժամվայ ընթացքում ջուրը ծածկեց բոլոր կայարանի գծերը և այնպիսի թափով հեղեղեց ապրանքներ յանձնելու բակը որ մի քանի ապրանքով լի վագօններ ռելսերից ընկան ջուրը։ Մի քանի ապրանքային պահեստներ ծածկվել են ջրով։ Ջրի երեսից հանեցին բազմաթիւ ապրանքներ, ըստ որում գլխաւորապէս փչացվեցին ալիւր, շաքար, թէյ, լուցկի և այլն։ Դէպի Բալաջարի տանող գլխաւոր ճանապարհը ծածկված է մի քանի տեղերում։ Գնացքները կանգնած են։

Այդ տեսակ տեղեկութիւն ստանալուց յետոյ, անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ-մ. Նէյգեբաուէրը սեպտ. 18-ին արագ գնացքով Բագու ուղարկեց ինժեներ Բուսէնկոյին և նշանակեց մի յատուկ մասնաժողով փչացած ապրանքի քանակը և վնասների չափը որոշելու համար։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ընթերցողները կարդացին արդէն, որ Բագւում մուտք է գործել խոլերան։ Այդ հանգամանքը ստիպել է Թիֆլիսի քաղաքային վարչութեանը կարգադրել սանիտարա-տնտեսական մարմին անմիջապէս գործի դիմել, այսինքն սանիտարական հոգաբարձութիւնների հետ շրջել քաղաքի բոլոր արդիւնաբերական հաստատութիւնները և կասկածելի մթերքները ոչնչացնել։

◆ Մի քանի տարի առաջ Բագուի նաւթարդիւնաբերող Դաւիթ Աւան-Իւզբաշեան, գնելով հանգուցեալ Ալ. Երիցեանի գրադարանը, նուիրեց նրան Էջմիածնին։ Ընդ սմին նա որոշ գումար մնացրեց Էջմիածնի վանքի գանձարկղը՝ նոր գրադարանի շէնք կառուցանելու համար, որովհետև այժմեան շինութիւնը հնացել է և անպէտքացել։ Այդ միյարկանի նոր շինութիւնը արդէն պատրաստ է, սակայն նա հազիւ թէ տեղաւորէ իր մէջ բոլոր գրքերը և ձեռագրերը։ Այդ պակասութիւնը նկատեց ինքը Աւան-Իւզբաշեանը և նուիրեց դարձեալ 15 հազար րուբլի երկրորդ յարկ աւելացնելու համար։ Այն ժամանակ գրադարանի շինութիւնը, բացի գրապահեստից, կունենայ առանձին սենեակներ ընթերցման և պարապմունքների համար։ Մտածում են նաև շինութեան մէջ մի սենեակ յատկացնել գրադարանապետի համար։ («Կ.»)

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, շաբաթ, կը կայանայ Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Ծնայնագործ. Ընկ. ընդհանուր ժողովը, որը կը զբաղվի մի շարք կարևոր խնդիրների քննութեամբ։ Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում, երեկոյեան 7½ ժամին։

◆ Մայրաքաղաքի թերթերը Կովկասի Փոխարքայի դիւանապետ Պետերսոնի ժամանումը Պետերբուրգ կապում են Կովկասում բարենորոգումներ մտցնելու հարցի հետ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի վերջին նիստում որոշվեց իշխ. Վ. Ն. Ջերբեզովի առողջութիւնը վերականգնելու ծախքերի համար կրկին յատկացնել 1800 ր.։ Նոյն նիստում մերժվեց գնդապետ Սուրբենեանի խնդիրը՝ 5 հազար րուբլի քաղաքային տուրքերը չտանելու մասին։

◆ Ֆիլօքսերային յանձնաժողովը Կախեթիայում վերջացրեց արդէն հետախուզիչ իր աշխատանքները։ Մօտ 3000 դեսեատին տարածութեան վրա խաղողի որթերը ազատ են ֆիլօքսէրայից։ Առանձնապէս հիւանդութիւնը տարածված է Կարդանախ գիւղում։

◆ Բարձրագոյն Դրան մինիստրութեան խորհրդի անդամ Վ. Պօզօժևը դիմել է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Խատիսեանին խնդրելով հայթայթել իրան բոլոր այն նիւթերը, որոնք վերաբերում են Կովկասում զեմստվային հաստատութիւններ մտցնելուն, ի թիւս որոց նահանգական ատեանի խորհրդակցութիւնների արձանագրութիւնները։

◆ Երէկ տեղի ունեցաւ Թիֆլիսի դումայի ձայնաւոր Ի. Ա. Ասլխանովի թաղումը։ Թաղման հանդէսին Քաշվէթի եկեղեցում ներկայ էին Թիֆլիսի նահանգապետը, փոխ-նահանգապետը, քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները, շատ ձայնաւորներ և մեծ բազմութիւն։ Պսակներ էին դրել Թիֆլիս քաղաքից, վրաց ֆիլարմոնիկական ընկերութիւնից, բանտային կոմիտէից, Թիֆլիսի ժողովարանի աւագներից և ուրիշներից։

◆ Սեպտեմբերի 17-ին ոստիկանութեան միջոցով ձերբակալվեց Թիֆլիսի նահանգից աքսորված և ինքնակամ վերադարձած Գուրգէն Լևոնեանը (նաև Ստեփանեան)։ Ձերբակալվածը դատի է կոչվում պատժագրքի 63-րդ յօդուածով։

◆ Թիֆլիսում առևտրական կրթութիւն տարածող ընկերութիւնը արդէն սեպտեմբերի սկզբից բացել է առևտրական դպրանոց (Коммерч. училище), որ թւով երկրորդն է Թիֆլիսում։ Դպրոցը գտնվում է Նաբերեժնայա փողոցի վրա, տուն Աբրահամեանի, ոչ հեռու Վօրօնցօվի արձանից Կուկիայում։ Այդ շինութեան մէջն է տեղաւորվել ժամանակաւորապէս և Ի. Զ. Տէր-Ստեփանեանի մասնաւոր առևտրական ուսումնարանը (Торговая школа)։ Աշակերտների թիւը արդէն անցնում է 200-ից, որոնցից մօտ 80 հոգի ուսանում են առևտրական դպրոցի (Коммерч. учил.) 4-րդ դասարանի երկու զուգընթացներում, իսկ մնացած աշակերտները ուսանում են առևտրական դպրոցի (Торговая школа) I նախապատրաստականում և 3 դասարաններում։ Աշակերտները ըստ ազգութեան բաժանվում են այսպէս. հայեր—120, վրացիք—60, մնացածը զանազան ազգութիւններից։

◆ Բագւում, սեպտ. 13-ին, առ. ժամը 11-ին, Մոսկվա-Կովկասեան ընկերութեան նաւթահորում, Ռոմանիում, ֆոնտան խփեց, որ օրվայ ընթացքում տալիս է 400,000 փութից աւելի նաւթ։ Նաւթը սկզբում թափվեց հարևան լճում, բայց յետոյ, ձեռք առնված միջոցների շնորհիւ, կանգնեցվեց։ Պահպանութեան համար դրված է ոստիկանութիւն։ («Кс.»)

◆ Ռոստովից (Դ./վ.) ստացված տեղեկութիւնների համաձայն, յատուկ մի մասնաժողով է գալիս Թիֆլիս՝ քննելու պօստահեռագրական գրասենեակի բոլոր գործերը։ Մասնաժողովը ուղարկված է գլխաւոր պօստահեռագրական վարչութեան կողմից։

◆ Ստացանք հետևեալ նոր գրքոյկները. 1) Սմբատ Բիւզանդ—«Սիրոյ ու տանջանքի յուշերից», Ա. պրակ, Ալէքսանդրօպօլ, գինն է 10 կոպ.։ 2) Արտաշէս Օհանջանեան—«Էսպերանտօ միջազգային լեզուն և նրանից սպասվելիք մեծ օգուտները», Թիֆլիս, գինն է 3 կոպ.։ 3) Մ. Գուլազեան—«Դալարի ախպիւր», Թիֆլիս, գինն է 5 կոպ.։ 4) Ն. Դովլէնն և Ա. Խաչ—«Պատմութիւն հին հայերի», պրակ առաջին, Թիֆլիս, գինն է 50 կոպ.։ 5) Նոյն գրքոյկի պրակ երկրորդը, Թիֆլիս, գինն է 25 կոպ.։

◆ «Гол. М.» նկարագրելով Էջմիածնի գահի նշանակութիւնը և օծման հանդէսը (№ 210), հաղորդում է մոսկվայաբնակ հայերի որոշումը օծման առիթով։ Նախ հայկական գաղութը հեռագրով շնորհաւորել է Վեհի օծումը, ապա վերսկսել է ժողովարարութեան՝ նոր վեհարան կառուցանելու համար։ Դեռ Վեհը Մոսկվա եղած ժամանակ այդ նպատակով հաւաքվել էր 15,000 ր.։ Կարծում են, որ այդ գումարը կարելի կը լինի հասցնել 50,000 ր.։ Օծման օրը գաղութը ճաշկերոյթ է սարքել Մոսկվայի ամենալաւ հիւրանոցներից մէկում։

◆ Ինչպէս հաղորդում է «Рус. съ Кавказа» թերթը, Նովօչերկասկի դատարանի քննիչը հրամանագրել է բանկային տան եղբ. Ժամհարեանների (Մոսկվայում), որ նա ներկայացնի իրան վերջին երեք տարվայ մէջ բանկի միջոցով կատարված բոլոր փոխադրութիւնների ցուցակը։ Դա քննիչին հարկաւոր է «Դաշնակցութեան» դէմ դատի համար։

◆ Այսօրվանից սկսվում է թատրոնական սէզոնը Թիֆլիսի Արտիստական ընկերութ. թատրոնում ռուս դրամատիքական խմբի ձեռքով։ Այս տարի, ինչպէս երևում է, միայն մենք հայերս զրկված ենք լինելու ներկայացումներ ունենալուց այդ թատրոնում։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատունը Թիֆլիսի նահանգապետից պահանջել է մանրամասն տեղեկութիւններ տալ հետևեալ հարցերի վերաբերութեամբ. ինչով են արտայայտվում բանտային շինութիւնների պակասութիւնները. որքան բանտարկեալների համար է շինված բանտերից իւրաքանչիւրը և որքա՞ն բանտարկեալներ իսկապէս տեղաւորված են նրանց մէջ. ինչքա՞ն է բանտերի կառավարիչ պաշտօնեաների թիւը, ամեն մինում առանձին. կազմակերպված կա՞ն արդեօք վճարովի աշխատանքներ բանտարկեալների համար, և ինչ գումարի միջնորդութիւն յարուցված է բանտային գլխաւոր իշխանութեան առաջ. եթէ շինութիւնները անպէտքացել են և հարկաւոր է նաև կազմակերպել բանտային պարապմունքներ և այդ տեսակ միջնորդութիւններին պատասխան տրվե՞լ է արդեօք։

◆ Վրաց-իմերէթեան սինօդական գրասենեակի պրօկուրորի պաշտօնում Գօրդենսկու փոխարէն ժամանակաւորապէս նշանակված է միսիոներ Պլատոնովը։

◆ Ինժեներ Պօտերնին արդէն ուղարկել է Թիֆլիսի քաղ. վարչութեանը քաղ. կատարելագործված սալայատակի նախագիծը։

◆ Սեպտ. 15-ին տեղի ունեցաւ վրաց դրամատիքական ընկերութ. անդամների ժողովը։ Ժողովը որոշեց թոշակ նշանակել Վ. Շալիկաշվիլուն, որ արդէն մեկնել է Մոսկվա դրամատիքական դասընթացքները։ Ժողովում ընտրվեցին 3 սեկցիաներ։ Երկրորդ սեկցիային յանձնարարվեց վարել դրամատիքական խմբի գործերը, իսկ երրորդին՝ կազմել ռեպերտուարը։ Վերջում ընտրվեցին հերթական ռեժիսօրներ՝ Կ. Մեսխի, Արաշիձէ, Շատիրիշվիլի և Գեդևանովը։

◆ «Гол. Москвы»-ին Կիևից հեռագրում են, որ շաքարի գինը արագ բարձրանում է։ Պատճառը՝ ճակնդեղի այս տարվայ բերքի մասին աննպաստ լուրերն են։

◆ Բաթումի քաղաքային ինքնավարութիւնը միջնորդել է կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ, որ 20 տարով, սկսած 1910 թ. յունվարի 1-ից, յետաձգվի այն 245,000 րուբլու գանձումը, որ քաղաքը վճարելու է պետական գանձարանին քաղաքային գործերի ատեանի, քաղաքային ոստիկանութեան և կառավարութեան կրթական հաստատութիւնների պահպանման համար։

◆ Վլադիկավկազից Թիֆլիս սարերով երկաթուղի կառուցանելու մասին կազմված յանձնաժողովը, ինչպէս հաղորդում է «Гол. М.», տեղն ու տեղը ուսումնասիրելով խնդիրը գտել է, որ գիծը յամենայն դէպս շատ վնասներ է տալու արդիւնքի կողմից։ Բայց գիծը կառուցանելն անհրաժեշտ է ռազմական տեսակէտից։ Եւ քանի որ գանձարանն այժմ իր միջոցները յատկացնում է Ամուրեան երկաթուղուն, ապա սրա վերջանալուց անհրաժեշտ է ձեռնարկել Վլադիկավկազ-Թիֆլիս գծի կառուցման։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Անթիպայից Կ. Պօլսի հայոց պատրիարքարանին հասած տեղեկութիւններից երևում է, որ վերջերս այդ քաղաքում բողոքականների կողմից բացված և նրանց միջոցով կառավարվող որբանոցի սաներին արգելել են եկեղեցի գնալ և իրանց կրօնական պաշտամունքը կատարել այնտեղ։ Այդ որբանոցում պատսպարվածները Անտիոքից հաւաքված հայ-լուսաւորչական պատանիներ են, թւով մինչև 35 հոգի։ Այդ պատանիներից մի քանիսը, չը կարողանալով հանդուրժել այդպիսի աննորմալ դրութեան, ստիպվել են փախչել որբանոցից։

◆ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանին կից գործող ուսումն. խորհուրդը, ցանկանալով դիւրութիւններ ընձեռել այն հայ պատանիներին, որոնք կամենում են օսմ. պետական բարձրագոյն ուսումնարաններ մտնել, որոշել է օսմաներէն լեզուի մասնաւոր մի դասընթացք հաստատել։ Արդէն այդ նպատակով կազմվել է ուսուցչական մասնախումբ ձեռնհաս ուսուցիչներից։

◆ Մուշից ու Ջարսանջաքից Կ. Պօլսի հայոց պատրիարքարանին վերջերս յաճախ հեռագրում են, որ լքված հայ կիների մասին, որոնց ամուսինները՝ հեռանալով իրանց երկրից ու օջախից՝ բոլորովին մոռացել են իրանց հայրենի յարկն ու կանանց, կտրուկ ու վերջնական միջոցներ ձեռք առնվեն, քանի որ նրանց անորոշ դրութիւնը պատճառ է լինում հասարակական գայթակղալից դէպքերի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ֆինանսների մինիստր Կոկօվցեվը ամսիս 26-ին ճանապարհվում է Հեռաւոր Արևելք՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու արևելեան-չինական երկաթուղու գործերը։ Երկաթուղին իր վնասներով մի ծանր բեռն է դարձել պետական գանձարանի համար։ Կոկօվցեվը նիւթեր պիտի ժողովէ և մեր դրացիների՝ չինացիների և ճապօնացիների մտադրութիւնների մասին, որոնց համար տեղացիները շատ յուզիչ լուրեր են պատմում, և պարզաբանէ այն բոլոր միջոցները, որոնք պիտի աջակցեն Հեռաւոր Արևելքի բարգաւաճման գործին։

◆ Դումայի եկեղեց. յանձնաժողովն արդէն սկսել է իր աշխատանքները։ Յանձնաժողովի զեկուցողների մեծագոյն մասը ընտրված է Դումայում տիրապետող կուսակցութիւնից՝ հոկտեմբերեաններից։

◆ «Голосъ Москвы» թերթին հեռագրում են Վարշավայից, որ տեղական ֆիրմաները ընդհատել են Պարսկաստանի հետ առևտուրը, շնորհիւ այնտեղ տիրող անիշխանութեան։

Երկաթուղու գնացք, 13 սեպտ.

Մեր ճանապարհորդութիւնը դէպի Պետերբուրգ վտանգից ազատ չը մնաց։

Հազիւ Վօրօնէժից մեկնեցինք՝ մեր գնացքը ենթարկվեց խորտակման։ Մեր գնացքը դուրս եկաւ իր շաւղից և երեք վագօն գլորվեցին։ Բարեբաղդաբար՝ մեր վագօնը չը փշրվեց և մենք ազատ մնացինք վտանգից։

Դուրս վազեցինք վագօններից։ Պարզվեց, որ կան վիրաւորներ, բայց մահի ոչ մի դէպք։

Սկսեցինք օգնել վիրաւորվածներին, և մեր խնամքի տակ է մի բժիշկ, որ վէրք է ստացել գլխից։

Այստեղ կուշանանք բաւական։ Մինչև նոր գնացք կազմեն և ուղարկեն՝ քիչ ժամանակ չի անցնի։

Իսահակ Քալանթար.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերան Թիֆլիսում

Հինգշաբթի, սեպտեմբերի 17-ին, սկսվեցին Թիֆլիսում արքունական թատրոնի օպերային ներկայացումները։

Սեզոնի բացումը կատարվեց Գլինկայի «Жизнь за Царя» օպերայով։

Ներկայացումը գրաւել էր բազմաթիւ հասարակութիւն, որ լցրել էր թատրոնը ներքևից մինչև վերև։

Երաժշտական ներածութիւնը և նախերգանքը իրանց գեղեցիկ կատարումով տրամադրեցին հասարակութեանը նպաստաւոր կերպով։

Երգիչները Թիֆլիսին անծանօթ անձեր չեն։ Նրանք զանազան ժամանակներ երգել են արքունական թատրոնում։

Սուսանինի դերը կատարում էր Գալեցկի, որը ունի ուժեղ, տպաւորիչ և հաճելի թաւ ձայն։

Նա նաև բաւական լաւ խաղում է, պատկերացնելով ծերունի գիւղացուն իբրև սիրող հօր և իբրև հայրենասէրի։

Նրա աղջկայ՝ Անտոնիդայի դերում հանդէս եկաւ երգչուհի Դեվօս-Սոբոլևա։ Նրա վրա առանձնապէս կենտրոնացած էր հանդիսականների ուշադրութիւնը՝ տեսնելու թէ որքան նա գնահատելի ույժ է այս տարվայ խմբի մէջ։ Դեվօս թողեց թէև ոչ առաջնակարգ, բայց անպայման նպաստաւոր տպաւորութիւն։ Նրա ձայնը մաքուր է, ճկուն, քնքոյշ, բայց չափազանց բարակ։ Երգում և խաղում է համարձակ, իմաստալի։ Նա մանաւանդ գեղեցիկ կատարեց երրորդ գործողութեան ողբերգական կտորը։

Սաբինինի դերում հանդէս եկաւ Թիֆլիսի վաղեմի ծանօթ երգիչ Բօրիսենկօ։ Նրան ողջունեցին ծափահարութեամբ և յետոյ ներկայացման ընթացքում տուին մի քանի փունջեր։ Բօրիսենկօն նոյնն է, ինչ և առաջ։ Երգում է ճաշակով, երաժշտօրէն, արտայայտիչ կերպով, բայց ձայնը նոյն կիսախեղդուկ տեմբրը ունի, որին ընտելացել են նրա ձայնին նախկին ծանօթ ունկնդիրները։

Վանիայի դերը կատարեց աջողութեամբ երգչուհի Արդ։

Լեհական պարերը կատարվեցին հմտութեամբ։

Առ հասարակ երևում էր խնամատարութիւն և ռեժիսօրական հմտութեան ներկայացման մէջ։

Միրոյ

ԼԵՌԱՆ ԱՍՏՈՒԱԾՈՒՀԻՆ

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց անդր, և փոխեսցի։ Մատթ. ԺԷ, 19.

Ահա ճամբորդը հետևում կտրում է իր անվերջ, միօրինակ, տաղտուկ ճամբան։

Արեգակը կիզում է, փոշին խեղդում է ճամբորդի ցամաքած կոկորդը։

Շուրջը դեղնած, գունատ արօտ, ծղրիդների միաձայն, միօրինակ չըխկչըխկոցը յուսահատեցնում, թուլացնում են յոգնած, սպառած ճամբորդին։

Եւ նա ընկնում է։

Ահա հօրիզօնի վրա տեսնում է կանաչ, հովասուն ծառեր, ժողովում է իր վերջին ույժերը, ճիգ է թափում և յուսոյ մի կաթիլով շարունակում ընթանալ դալկացած, ուժասպառ ճամբորդը։

Վերջապէս նա հասնում է փրկարար, ցանկալի ծառերին. նա տեսնում է մի կանաչ արօտամարգ և մի քանի վիթխարի ծառեր, որոնց մօտով հոսում է մի վճիտ աղբերակ. դողդոջուն քայլերը ուղղում է դէպի աղբերակը և ծունկի գալով իր ցամաքած շրթունքները մօտեցնում առատաբուխ և արտասուքի նման մաքուր ջրին։

Թուլացած մարմինը կենդանանում է և յուսահատ ճամբորդը բարձրացնում է գլուխը և դարձեալ տեսնում է դաշտը, ժպտացող արեգակը և ժպտացող [illegible]...

Եւ գլուխը խոնարհեցնում է...

Բայց մի քաղցր, անուրժ նիրհ խիտ և ծանր խոնջ է բերում նրա վրա, և նա ընկնում, թափվում է դարաւոր ծառերի բների մօտ և քաղցր, թարմացնող քուն մտնում։

Նա տեսնում է մի երազ։

Ծառերի միւս կողմը մի լոյս երևաց, ապա բարձր սարի գագաթին ձեռքերը դէպի առաջ տարածած շեշտակի նայեացքով կանգնած մի կոյս։

Դա աստուածուհին էր։

Ի՜նչպէս հպարտ է նա, ինչքա՜ն գունատ հայեացք ունի նա. կարծես զգում է իր կախարդական մեծ ույժը։

Ցածրը, լեռան ստորոտը կանգնած է ամբոխը և նոյնպէս ձեռները տարածած դէպի վերև, դէպի աստուածուհին մի բան է հայցում նրանից և մագլցելով ցանկանում էր առաջ գնալ, բարձրանալ վեր, վեր, բայց որքան առաջ էր գնում ամբոխը, աստուածուհին աւելի և աւելի հեռանում էր նրանից։

Անցնում է մի քանի վայրկեան, ճամբորդը հետաքրքրվում է և անգիտակցաբար վեր է կենում և քայլերը ուղղում դէպի լեռը։

Հետաքրքրութիւնը սակայն [illegible] փոխվում է զմայլանքի. Նա տեսնում է ճիշդ այն իդէալը, որին որոնելու ընկել էր նա իր ուղին և տարիներ շարունակ կտրում էր իր ծանր, տաղտկալի ճամբան, բայց չէր գտնում իր ցանկացած կուռքին։

— Աստուած իմ, միթէ դա է, —պոկվեց նրա շրթունքներից։ —Իսկ և իսկ նա. բայց որքան գունատ է նրա դէմքը. կարծես, նա ևս ինձ նման յուսահատ ճամբորդ լինի. բայց որքան հեռու է ինձանից և բարձր. իմ թոյլ քայլերը անկարող են բարձրանալ այդ սարի գագաթը։

Անցնում է շատ յուսահատեցնող և դաժն րոպէներ, և ճամբորդը փշրված իր յոյսերի մէջ ուզում է հեռանալ, շարունակել իր ճամբան, երբ, յանկարծ, ամբոխի միջից բարձրացաւ մի ձեռք դէպի իրան և ամուր բռնելով նրա ձեռքը՝ մի ձայն պարզ և հակիրճ արտասանեց այս խօսքերը. «Գնանք, գնանք, շտապենք. ահա սարի միւս կողմն է իմ տաճարը. գնանք, արդէն արշալոյսը բացվում է, աղօթելու ժամանակն է»։

Մինչև ճամբորդը ուշքի եկաւ, տեսաւ իրան մի հոյակապ տաճարի առաջ, բայց ամբոխը չը կար. կանգնած էր իր առաջ լերան աստուածուհին և իր վսեմութեամբ և աստուածային շուքով կախարդում էր ճամբորդին։

— Մտնենք տաճարը,—ուժգին և համարձակ դարձաւ ճամբորդը աստուածուհուն։

— Ոչ,—պատասխանեց աստուածուհին—ես իմ տաճարում մենակ եմ աղօթում և իմ աղօթքը ոչ ոք խանգարելու չէ։ Դու մնա այստեղ, ես մտնեմ։

Եւ ճամբորդը հաւատաց՝ տուեց մի ուժգին հարուած տաճարի դրանը։ Փականքները թափվեցին և դռները բացվեցին նրա՝ ճամբորդի առաջ. և բռնելով աստուածուհու ձեռքից, երերուն լոյսերի միջով անցաւ խորհրդաւոր կիսամթութեան մէջ—տաճարը։

Բայց աւա՜ղ, տաճարի աստուածային վսեմութիւնը իր հրաշալի պարզութեամբ յափշտակեց նրան, լսվեցին հրեշտակային մեղեդիներ և երկնային երգեհոնի՝ հոգու լարերը թափանցող մելօդիկ ներդաշնակ ձայներ։

Ճամբորդը տարվեց և գրաւվելով այդ աստուածային վեհութիւնից՝ ընկաւ երեսի վրա և սկսեց աղօթել...

Նա մոռացաւ իր կուռքին՝ աստուածուհուն, որի տաճարումն էր նա այժմ աղօթում։

Աստուածուհին կանգնած տաճարի հսկայ սիւներից մէկի մօտ՝ լուռ արտասվում էր...

Բայց, յանկարծ, ճամբորդը դարձաւ, նայեց արտասվող աստուածուհուն և արթնացաւ...

Նա տեսաւ իր առաջը դարձեալ միօրինակ, տաղտկալի ծանր ճամբան։

Ճամբորդը բարձրացաւ, խմեց սառնորակ աղբիւրի ջրից և նորից քայլերը ուղղեց դէպի հեռուն...

Արշալոյսը բացվում էր։

Կարա-Դարվիշ

ՄԱՄՈՒԼ

Երկրորդ Պետական Դումայի անդամ Սէվէրիան Ջուղելու թաղման առիթով վրաց «Իվէրիա» շաբաթաթերթը, քննելով հանգուցեալի և նրա գաղափարակիցների գործունէութիւնը, մի տեսակ ուրախութիւն էր արտայայտում այն երևոյթի համար, որ իբր թէ հայերը ոչ մի մասնակցութիւն չունեցան նրա թաղմանը, որպիսի ընթացքը շաբաթաթերթը գովելի նկատելով՝ աւելացնում էր, թէ այդ ապացոյց է, որ հանգուցեալի և նրա համախոհների արծարծած մտքերը ոչ մի արձագանք և համակրութիւն չեն գտնում հայ հասարակութեան մէջ։ Այդ առիթով վրաց «Զանգի» թերթը իր մի խմբագրականով լուսաբանելով «Իվէրիա» շաբաթաթերթի յետին մտքով տոգորված լինելը այս խնդրում՝ նկատում է, որ հայ ժողովրդի բանիմաց և աշխատաւոր մարդկութեան շահերը պաշտպանող տարրերը մասնակցեցին նրա թաղմանը, իբրև ապացոյց երկու ցեղերի մէջ տիրող համերաշխ զգացմունքների արտայայտութիւնների։

Թերթը ի միջի այլոց գրում է.

Նա—«Իվէրիան»—ինքն էլ լաւ գիտէ, որ հայերի այն մասը, աշխատանքի այն լծի մէջ գտնվող տարրերը, որոնք չեն ենթարկվում շովինիստական հովերին և թունաւոր սիրտ չունեն, որոնք բոլոր աշխատաւորների վրա միատեսակ աչքով են նայում և տարազով չեն տարբերում թշնամի-բարեկամին, այս բոլորը նոյնիսկ անչափ ողբացին և պատւեցին Ջուղելու յիշատակը։ Բայց բաւական է... «Իվէրիայի» վրդովեցուցիչ յօդուածը ով որ կարդայ, անմիջապէս կըմբռնի, թէ ինչ բարոյականի տէր է յօդուածագիրը։ Ամօթալի է, որ այսօրինակ մտքերի արտայայտողը լրագրում տեղ ունի։

Նոյն համարում Գ. Փ—եանցը, մի խումբ անձանց յանձնարարութեամբ բողոքելով «Իվէրեայի» յօդուածի դէմ, այն միտքն է յայտնում, որ թերթի նպատակը պրովոկացիա է պարունակում իր մէջ և ամբողջովին ատելութեամբ լցված է դէպի ձախակողմեան տարրերը, որի համար էլ աշխատում է հայ հասարակութեան անգիտակից մասի մէջ թունաւոր մտքեր տարածել ընդդէմ վերոյիշեալ տարրերի։

Յօդուածագիրը վերջում փաստօրէն ապացուցում է, որ ստուար քանակութեամբ հայեր մասնակցել են Ջուղելու թաղմանը։

Մենք մեր կողմից կաւելացնենք, որ հանգուցեալ Ջուղելու թաղմանը մասնակցել են ոչ միայն ծայրայեղ ձախակողմեան տարրերը, այլ և ազատամիտ բանակին պատկանող շատ ու շատ անձինք, որոնց թւում կար և «Մշակի» խմբագրութեան ներկայացուցիչ Հ. Առաքելեանը, վերջին յարգանքը տալու գրական և հասարակական գործիչ Սէվէրիան Ջուղելուն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ցարսկիէ-Կոլօդցի, 14 սեպտեմբերի

Անցեալ տարի օգոստոս ամսին Սղնախի գաւառի Ցարսկիէ-Կոլօդցի աւանի հայ հասարակութիւնը, բաղկացած մօտ 30 տնից, ընտրեց ինձ համախօսականով մըշտական քահանայացու և ուսուցիչ Ցարսկիէ-Կոլօդցիի համար։

Ես աւարտել եմ 1882 թ. Սղնախի հայոց եկեղեցական երկդասեան դպրոցը, որն այն ժամանակվայ ծրագրով համապատասխանում էր թեմ. դպրոցի երկրորդ դասարանի ծրագրին. աւարտել եմ նոյնպէս Սղնախի քաղ. դպրոցը 1888 թ., որտեղ ուսանում են 7 տարի. այլև աւարտել եմ հաշուապահական կուրսերը Ն. Աբրահամեանի, ունեմ ցէնզ քաղ.-ծխ. և տարրական դպրոցի ուսուցչի՝ համապատասխան ուսուցչ. սեմինարիայի իրաւունքների. անունս մուծված է հայ ուսուցչ. ցուցակի մէջ «Արարատի» 1894 թ. յունիսի համարում. վարել եմ 15 տարի ուսուցչի և մեծ մասամբ աւ.-ուսուցչի պաշտօններ հայոց և պետ. դպրոցներում, աւանդելով երկար տարիներ նաև հայոց լեզու, կրօն, եկ. երգեցողութիւն ի թիւս ուրիշ առարկաների իշխանութեան թոյլտուութեամբ։

Թիֆլիսի կօնսիստորիան անցեալ տարվայ հոկտեմբերին պահանջեց ինձանից թեմ. դպրոցի երկրորդ դասարանի վկայական, համաձայն ծխ. կանօնադրութեան 59-դ յօդուածի, որովհետև այդ յօդուածով հարիւր տնից պակաս գիւղերի համար թոյլատրվում է ձեռնադրութիւն երկրորդ դասարանի վկայականով։

Ես բացատրութիւն տուեցի կօնսիստորիային, որ մինչև այժմ հոգ. իշխանութիւնը ստիպողաբար չէր պահանջում, որ քահանայացուն ունենայ ուսման վկայական անպատճառ թեմ. դպրոցից և իմ ուսման և ուսուցչ. վկայականներն աւելի բարձր են պահանջվածից, ուստի խնդրեցի բաւական համարել այդ և ինձանից նոր վկայական չը պահանջել։

Կօնսիստորիան խնդիրս յարգեց և անցեալ նոյեմբերին գործն ուղարկեց էջմիածնի սինօդին, միջնորդելով հրաման տալ ձեռնադրութեանս։ Սինօդը մերժեց կօնսիստորիայի միջնորդութիւնը, պահանջելով ինձանից թեմ. դպրոցի չորրորդ դասարանի վկայական (այն էլ բոլոր առարկաներից), համաձայն ծխ. կանօնադրութեան 59-դ յօդուածի։ Կօնսիստորիան կրկին միջնորդեց, բայց սինօդը դարձեալ մերժեց։

Երրորդ անգամ կօնսիստորիան ինձ իրաւունք տուեց անձամբ դիմելու սինօդին։ Անցեալ յուլիսի 4-ին ես խնդիր ուղարկեցի էջմիածնի սինօդին, խնդրելով ազատել ինձ քննութիւնից, իսկ բացասական դէպքում իրաւունք տալ ինձ քննութիւն տալ միմիայն հայոց լեզուից և կրօնական առարկաներից II դասարանի ծրագրով, որովհետև, համաձայն ծխ. կան. 59-րդ յօդ., աշխարհիկ դպրոցներում կրթվածները պէտք է լրացուցիչ քննութիւն տան միմիայն այդ առարկաներից։ Սինօդն ինձ ևս մերժեց և գործս վերադարձրեց։

Եւ այսպէս հասարակութիւնը, գործակալը, կօնսիստորիան և առաջնորդն ինձ արժանաւոր գտան, իսկ սինօդը՝ ոչ։ Սինօդը չը յարգեց կօնսիստորիայի կրկնակի միջնորդութիւնը։ Սինօդը զրկեց ինձ իրաւունքից՝ ձեռք բերել II դասարանի վկայական, մինչդեռ «Արարատի» համարները լի են, երբ սինօդը հրամաններ է արձակել ձեռնադրութեան II դասարանի վկայականով։

Էջմիածնի սինօդը, որ մօտիկ անցեալում այնքան տգէտներ է փաթթել հայոց ազգի շնչքին, այսօր այնքան ոգևորվել է, որ 15 տարի իր երիտասարդական կեանքը հայ մանուկների դաստիարակութեան համար մաշող ուսուցչիցս ուսման նոր վկայական է պահանջում, երևի ի տրիտուր իմ բազմամեայ մանկավարժական ծառայութեան։

Այս հանելուկն ունի իր բնորոշ բացատրութիւնը։

Ես, լինելով «Մշակի» մշտական թղթակից, համարձակութիւն եմ ունեցել քննադատել «Մշակում» թեմ. իշխանութեան գործունէութիւնն այն ժամանակ, երբ Սուրէնեանցը Թիֆլիսի թեմի առաջնորդն էր, որի համար նա սաստիկ զայրացած էր ինձ վրա և իր դժգոհութիւնն ուղղակի երեսիս յայտնեց, երբ 1903 թ. մարտին մի խումբ սղնախեցիներս գնացինք նրա մօտ այցելութեան Սղնախի եկեղեցական գործերի պատճառով։

Սինօդի ապօրէն վճռի դէմ ես չը դիմեցի սինօդի պրօկուրօրին, այլ բողոքել եմ Վեհափառ Կաթողիկոսին։ Հասարակութիւնն ևս առանձին խնդրագրով դիմեց Վեհափառին։

Յակոբ Գրիգորեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 սեպտեմբերի

ԼՈՆԴՈՆ։ Լորդերի ժողովը ընդունեց երկրորդ ընթերցանութեան մէջ իռլանդական հողային բիլը, որը լրացնում է անցեալ տարի Բիրրէլի մտցրած ձեռնարկութիւնները՝ դիւրացնելու համար արդէն Իռլանդիայում մտցրած հողի գնման սիստեմը։

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայի ապրանքատար գնացքի վրա երեք հոգի զինաթափ արին և վիրաւորեցին ստրաժնիկին։ Հալածվելով ժանդարմներից և գորոդովոյներից, նրանք սկսեցին փախչել և թաքնվեցին տներից մէկում Սալօվօյ փողոցի վրա, որտեղից և կրակում էին գօրօդօվօյի վրա։ Կանչված վաշտը երկու համազարկ տուեց և սպանեց բոլոր երեքին։

ԽԱՐԲԻՆ։ «Խարբին» ընկերութեան գործարանը աճուրդով վաճառելու ժամանակ տեղի ունեցած դէպքերը, ստուգված փաստերի համաձայն, հետևեալ կերպ են կատարվել։ Սեպտեմբերի 13-ի առաւօտեան 11 ժամին «Խարբին» ընկերութեան գարեջրատուն եկաւ նահանգական դատարանի դատաստանական պրիստաւ Սիվկօ՝ աճուրդով ծախելու համար գործարանի շինութիւնը, որ պատկանում է երեք հոգու, որոնցից մէկը ռուս է։ Գործարանի դռները փակ էին։ Դատաստանական պրիստաւի պահանջին՝ բանալ դռները՝ մերժում ստացվեց։ Այն ժամանակ դատաստանական պրիստաւը հրամայեց Բէդնեագա և Պօլտօրակի ոստիկաններին դռների վրայով բարձրանալ, մտնել բակը և բանալ դռները, որ և կատարվեց։ Այդ ժամանակ բակի ներսում գտնվող ընկերութեան փայատէրերը՝ գերմանահպատակներ Րէգտէր և Րօզէնվանգէր յարձակվեցին ոստիկանների վրա և բռունցքներով մի քանի հարուածներ հասցրին նրան։ Դռները ույժով բացվեցին և աճուրդը կատարվեց։ Կէսօրին դռների վրա բարձրացվեց գերմանական դրօշակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Անտառային դեպարտամենտը արքունական անտառային գործը բարւոքելու և աւելի կանօնաւորելու նպատակով մտադրութիւն ունի կազմել Եւրոպական և Ասիական Ռուսաստանում հազար նոր անտառապահութիւններ և մեծացնել անտառային ռէվիզօրների թիւը։

Սեմէօնօվսկայա փողոցի վրա հիւրանոցում բացվել է սադիզմի հողի վրա կատարված աղջկայ սպանութիւնը։ Մարդասպանը կուի բռնվելով իրան բռնել ուզող ծառայի հետ՝ աշխատում էր սպանել նրան և փախչել, բայց վերջը ձերբակալվեց։ Նա նոյն անձն էր, որը մի քանի շաբաթ առաջ սպանել էր մի աղջկայ «Դունայ» հիւրանոցում։

ՄԱԴՐԻԴ։ Ժողովրդի ահագին ամբոխը, հանդիսաւոր ընթացքով անցնելով լուսավառված փողոցներով և թնդացնելով օդը բացագանչութիւններով ի պատիւ Սպանիայի և զօրքի, պալատի առջև հանդիսաւոր օվացիաներ արեց թագաւորին։ Թագաւորը դուրս եկաւ պատշգամբը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ,
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կսէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս է տեսել
Ն. Դօլէն եւ Ա. Խաչ.-ի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ
ԳՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
Դիմել՝ «Գուտտենբերգին»։ Գինը 50 կ., 156 եր.։ (շ. չ.) 960. 6—1

Լոյս տեսաւ
Արտաշէս Օհանջանեանի
„ԷՍՊԷՐԱՆՏՕ“ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ ԵՒ ՆՐԱՆԻՑ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՕԳՈՒՏՆԵՐԸ
անունով գրքոյկը։ ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.։ Գումարով գնողներին 20% զեղջում։ Վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում։ Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում։
Հեղինակին կարելի է դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Баронская. 20. верхный этажъ. противъ воротъ. Арташесу Оганджаняну. 958. 1—1

ՀՐԱՒԷՐ

Ամսիս 20-ին, կիրակի, ժամը 12-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կրկին լինելու է ծխականների ժողով՝ շարունակութիւն նախընթաց ժողովների՝ ընտրելու մի անձն՝ ի լրումն չորս պատգամաւորների՝ մասնակցողների Մարիամեան-Յովնանեան ուսումնարանի հոգաբարձական ընտրութեանը. ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ. պ. պ. ծխականներին՝ շտապել եկեղեցի ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի ա. մ. գործակալ՝
Գրիգոր աւ. քահ. Մանդակունի
(շ. կ.) 957. 2—1

Լոյս տեսաւ
„ԴԱՍԸՆԿԵՐ“
Առաջին տարվայ այբբենարան-ընթերցարան
ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
Զարդարված գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ ճամառօտ բացատրութիւն գործածողներին
ԿԱԶՄԵՑԻՆ՝
Արշակ Չիլինկարեան և Տիգրան Ռաշմաճեան
Աշխատակցութեամբ Աւ. Իսահակեանի
ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կոպէկ.
✦ Գրախանութներին զեղջ 25% ✦
Գումարով առնողներին 20% զեղջ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում (Թիֆլիս)։
(չ. ու. շ.) 948. 10—3

ԱԳՐՈՆՈՄ,
վկայեալ Լօզանի գիւղատնտեսական ինստիտուտից և համալսարանի գիտական ֆակուլտետից, ցանկանում է Կովկասում կամ Պարսկաստանում պաշտօն ունենալ։ Դիմել. Թիֆլիսում՝ Կովկ. Հ. Բ. Ընկ. գրասենեակում Փայլակ Գարակիւլեանին, Թաւրիզում՝ Արշաւիր Չիլինկիրեանին, Genève (Suisse), A. Golandjian. Rue des Bains 14.
(հ. շ. ե.) 950. 3—2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ. уголь Красноводск. и Меркурьевск.. телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենօգրաֆիա։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։
Կուրսերի կանօնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տըրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. շ.) 731. 20—12

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ“ ՀԻՒՐԱՆՈՑ
Երևանեան հրապարակ, տ. Միրզօյեանի, տելեֆօն 358.
✦ ԹԻՖԼԻՍՈՒՄ ✦
Անպայման մաքրութիւն, անդորրութիւն և հանգստութիւն, էլեքտրական լուսաւորութիւն, տէլէֆօն և վաննաներ։ 50 համարներ՝ 1 ռուբ. սկսած։ Քաղաքավարի և չուտափոյթ աշխատող ծառայողներ։
✦ Պ. պ. վօյաժօրներին մեծ ԶԵՂՋ ✦
ՄԵՆԻՒՈՒ
I. ճաշ՝ 2 կեր.՝ 60 կ., 1 բ. օղի և 1 բ. գինի։ II. ճաշ՝ 3 կեր.՝ 75 կ., 1 բ. օղի, 1 բ. գինի, 1 թաս սուրճ։
III. ճաշ՝ 4 կեր. 1 ր., 1 բ. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ճաշ՝ 5 կեր. 1 ր. 50 կ., 1 բ. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ։
Յարգանքով՝ Ի. Կոչիլայա և Ն. Սխիարուլիձէ
(օ. մ.) 870. 100 - 10

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական գիտութիւնների կուրսերում
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ
կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական պարապմունքների միջոցով. կազմակերպվում են խմբակներ ըստ լեզ. ուսուցման վկ. ձեռք բերելու համար։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր 10—12 և 4—7 ժամ.։
Միքայէլեան պրոսպ. № 24|4
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեանց կանդիդատ Տ. ՓԻԼՈՅԵԱՆ
808. (օ. մ.) 20—14



ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակի մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի խանութներում
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
Իսկականը միայն այս դրօշմով
С.ПЕТЕРБУРГЪ.
Ռուս-ամերիկ. ռեզին. մանուֆակտուր.
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ТРЕУГОЛЬНИКЪ
ԱՆՈՒՆՈՎ
Թիֆլիսի բաժանմունքը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՃՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ ռուս-ամերիկական ռեզինի մանուֆակտուրայի ընկերութեան
ԿՐԵՄ ԵՒ ԱՊՐԵՏՈՒՐԱ կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. ✦ (շ.) 182 0—29

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.